

ԵՏՔՐԱՏԻ
ԵԺԱՆԱԳԻՆ
ԻՐԱԴԱՐԱՆ

№ 34-35

№ 34-35

ՍՑ. ԶՈՐՑԱՆ

ԳՐՍ. ԳՍ. Ի Ա. Ն Ի
Ա. Ղ. Զ Ի Կ Ը

891. 99

Զ-39

ԵՏՍԱԿԱՆ ԷՐՍՏԱՐԱՆԻ ԶՈՐՑՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1951

ՊԵՏՂՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 34-35

№ 34-35

891.99

այ

2-83

ՍՏ. ՋՈՐՑԱՆ

NOV 20

ԳՐԱԴԱՐԱՆԻ
Ա Ղ Ջ Ի Կ Ը



ԱՅՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ «ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻԿԸ»

Զորյանը պատկանում է մեր գրական ինտելիգենցիայի այն շերտին, վորը Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխությունից հետո կանգնեց Պորհրդային իշխանության պրատֆորմայի վրա՝ Գրականության մեջ Զորյանը հանդես յեկավ ուսական առաջին հեղափոխությունից հետո և կանգնեց մեր մանր-բուրժուական գրողների շարքում: Այդ ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչներ՝ Տերյան, Ա. Իսահակյան, Հ. Թումանյան, հողու ամբողջ խորությունմբ ասում էյին իշխող հանրակարգը, սակայն, չըմբռնելով պատմության դարգացման որենքները, հուսահատ քաշվում էյին հասարակական կյանքի ասպարեզից, սավառնում էյին «միջնադրի անուրջներում», փախչում էյին մարդկային հասարակությունից, Իսահակյանի բերանով վտանահարում էյին «ամեն մի որենք ու արդարություն», վորովհետև ուրիշ հասարակության որենք ու արդարություն չեյին ճանաչում, բացի կապիտալիստական հանրակարգից: Կապիտալը կործանում էր հին կյանքի բոլոր ատրիբուտները և հողս ցնդեցնում մանր-բուրժուական ինտելիգենցիայի բոլոր հույսերը: Այդ ինտելիգենցիան «սուրը ձեռքից վայր էր դնում», վորովհետև դասակարգային պայքարը պատկերացնում էր վորպես դոլություն բիոլոգիական կռիվ, իսկ մարդկային հասարակությունը վորպես մարդկային անհատների



124
43

Գառ. խմբ. Ս. Հարությունյան. Տեք. հմբ. [REDACTED] Սրբազրիչ՝ Հ. Սառիկյան Գլավիտ 8409 (բ). Բազմեր 162. Հրատ. 2833. Տիրած 5000. Գեորգի Տզարան

Հանձնված է արտադրության 20 I 1934 թ. Ստորագրված է տպագրության 20 II 1934 թ.

հասարակ աղբըզատ, ուր «ամենքը ասուք են սրում ա-
մենքի դեմ», ուր կարող է դոյություն ունենալ միայն-
տիրոջ ու ստրկի հասարակութունը: Ահա մեր մանր-
բուրժուական ինտելիգենցիայի բավական ստվար շեր-
տի մտայնութունը ուսուցիչայի տարիներին: Այդ ինտե-
լիգենցիայի վրոջ շերտերն աղբում էյին հասարակա-
կան խորն ապատիայով: Հասարակական կյանքից փախ-
չելու, կղզիանալու, ինդիվիդուալի ներքին աշխար-
հում սարքիակվելու ծայրահեղ անհատապաշտական
տրամադրութունները վարակում էյին ինտելիգենցիայի
ստվար շերտերին:

Վրո՞նք էյին հասարակական այդ տրամադրու-
թյունների սոցիալական աղունքները: Հայ մանր-բուր-
ժուազիան, մասնավորապես մանր դյուղացիութունը,
վրոբ արտահայտիչներն էյին մեր գրականության մանր
բուրժուական հոսանքի ներկայացուցիչները, թալտում
էյին կապիտալի ճիրաններում: Մանր-բուրժուական
գրողներն արտահայտում էյին նրա հողագրիման, բար-
բախման ու անկման պրոցեսը: Կործանվող հասարակա-
կան այս շերտի ինտելիգենցիան անտում էր խորտակ-
վող նավը, վողբում էր մանր-բուրժուական ոջախի
կործանումը, կործանվող նահապետական կյանքի բոլոր
«սրբություններն ու բարի սովորությունները»: Ամեն
ինչ դառնում էր առ ու ծախքի առարկա, ամեն
ինչ յենթարկվում էր կապիտալի անողորմ հաշվիչին:
1905 թ. հեղափոխության պարտությունը և ուսուցիչան
ուժեղացրին միայն հասարակական այդ շերտի ապա-
տիան: Այսպիսով մեր մանր-բուրժուական գրական ին-
տելիգենցիայի հասարակական տրամադրությունները
մանր-բուրժուազիայի պատմական կյանքի արտահայ-

տություններն էյին: Այդ ինտելիգենցիան կանգնած
էր «յերկու աշխարհի արանքում», մերթ վողբում էր
մանր-բուրժուազիայի կործանումը, մերթ վողբում
էր հայ բուրժուազիայի «յերկիր դրախտավայրի» պատ-
կերով:

Սակայն բացի հայ գրական հասարակական միջա-
վայրից, մեր գրականությունը կրում էր նաև ուսուսական
ժամանակակից գրականության՝ գերազանցապես Չեխո-
վի և սիմվոլիստների աղղեցությունը: Ահա հասարա-
կական գրական այն միջավայրը, ուր հրապարակ յե-
կավ Ստեփան Չորյանը: Գրական ստեղծագործական
մեթոդով նա յուրացրեց ուսուսական կլասիկները, դերա-
դանցապես Չեխովի կուլտուրան, իր հասարակական
իդեալներով, թեմատիկայով, բնության լիրիկայի մեջ
նա կանգնեց թումանյանի և մանր-բուրժուական գրող-
ների շարքում: Ստեփան Չորյանի նախահեղափոխական
գրվածքները՝ «Տխուր մարդիկ», «Յանկարպատ»-ը ար-
տահայտում են մանր-բուրժուական ինտելիգենցիայի
այդ շրջանի հասարակական տրամադրությունները:
Չորյանի այդ շրջանի գրվածքների հերոսները կապիտա-
լիստական հանրակարգի կողմից դաբո մղված, «ավե-
յորդ» աղղարնակության շարքն ընկած մարդիկ են:
Նրանց արագեղիան Ստեփան Չորյանի այդ շրջանի գր-
վածքների հիմնական մոտիվն է: Չորյանի համար այդ
հերոսներից ամեն մեկը մի ուրույն աշխարհ է, իսկ
մարդկային հասարակությունը՝ ինդիվիդուալների մի
հասարակ աղբըզաղ, վրոնցից ամեն մեկն անկախ է և
վոջնչով կապված չէ մյուսի հետ: Այդ առյերևութ
անկախ ինդիվիդուալների հարաբերությունների քո-
ղարկված շղարչի տակ նա չի տեսնում պատմական սրի-

նաչափությունն ու հասարակական կյանքի որենքները :
Ուտի ամեն մի ինքիվիդիումի տրագեդիան կապված է
նրա անձի, բնավորութեան և ունակությունների հետ :
Ահա թե ինչու Չորյանն իր հերոսների տրագեդիայի
մեջ վոչ վոքի չի մեղադրում : Նրա համար դոհն ու չա-
րագործը միանում են միևնույն անձնավորութեան մեջ :
Մինչևեռ իրականում այդ հերոսների տրագեդիայի
պատճառները գտնվում են հասարակական կյանքում :
Նրանք դոհ են դնում վոչ թե սեփական ասիկարութեան,
իսկ այդպես են նկարագրված «Տխուր մարդիկ» և «Ցան-
կապատ»-ի համարյա բոլոր հերոսները, այլ պատմա-
կան նոր պայմաններին : Կապիտալիստական հասարա-
կութեան անընդհատ վայրիվերումներն ու ցնցումները
խորտակում են այդ «ավելորդ» մարդկանց, վորովհետև
նրանք իրենց դերքով, հոգեբանութեամբ ամբողջապես
պատկանում են անցյալին : Այդպես են ահա Չորյանի
նախահեղափոխական գրվածքների հերոսները : Սակայն
Չորյանն ընդունում է, թե՞ մերժում այդ մարդկանց
կյանքը : Այստեղ է, վոր հեղինակը աուրք է տալիս
«մաքուր» արվեստի կողմնակիցներին և գրական ինտե-
րեսը գրավում է նրա համար առաջին տեղը : Չորյանը
մերկացնում է այդ մարդկանց կյանքի տափակությունն
ու մանրուքը, վորն անձնական կյանքի աուրյա կա-
րիքներից այն կողմ չի անցնում : Այդ կյանքը նրա հա-
մար ներկայանում է իբրև «նյութ», ինչպես կալին ար-
ձանադործի համար : Հեղինակը նուրբ հումորով ծաղ-
րում է այն ամենը, ինչ նվիրական է իր հերոսների հա-
մար և ծաղրում է այնտեղ, ուր լալիս են հերոսները :
Մերկացնելով այդ կյանքի անտանելի ճահիճը, Չորյանը
նոր վոչինչ չի հակադրում և մնում է մանր-բուրժուա-

կան իդեալիստական մտայնութեան սահմաններում :

Ռուսական դրականութեան մեջ Չեխովն ստեղծել է
այդ մանր մարդկանց ցնցումները ու վայրիվերումնե-
րից զուրկ կյանքի հոյակապ պատկերը : Այդ հերոսները
կոնսերվատիվ են, դեմ են ամեն մի նորածեղութեան,
իրենք էլ չգիտեն, թե ինչու համար : Սակայն ճնշվում
են հնի բեռան տակ : Բավական է, վոր ցնցվում են
նրանց «կյանքի հիմքերը», նրանք խորապես տրագե-
դիա յեն ապրում և խորտակվում են :

Պատերազմի տարիներին Ստեփան Չորյանը և մեր
մանր բուրժուական ինտելիգենցիայի վորոշ շերտեր
բնութագրելով պատերազմի սարսափները, մխիթարու-
թյունը վորոնում էլին հումանիզմի ու պացիֆիզմի մեջ

Լիներ հեռու մի անկյուն

Լիներ արդար մանկան քուն .

Յերազի մեջ յերջանիկ

Հաշտ ու խաղաղ մարդկություն :

Ահա թումանյանի և մեր մանր-բուրժուական ինտե-
լիգենցիայի վորոշ մասի հասարակական տրամադրու-
թյունները պատերազմի վերջին տարիներին : Այդ ին-
տելիգենցիան զղվել էր իշխող դասակարգից, փախել էր
պատերազմից և հուսալքվել : Պատերազմը նրան ներ-
կայանում էր վորպես մարդկային ցեղի մեծագույն չա-
րիքը : Սակայն նա մնացել էր յերկու աշխարհի ճամբա-
միջում և դեռ հեղափոխութեան կողմը չէր անցել : Միայն
Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխությունից հետո
այդ ինտելիգենցիայի բավական սովաբ շերտը, վորոնց
թվում նաև Ստեփան Չորյանը, կանգնեցին խորհրդա-
յին պատժորոմայի վրա և տվին մեր արձակ գրականու-
թեան նշանակալից յերկեր : Այդ յերկերի թվին է պատ-

կանոն Ստեփան Զորյանի «Գրադարանի աղջիկը»: Այդ վիպակը իրապես դրսևորում է Զորյանի գրական հասարակական իդեալական շրջադարձը: Այդ գրվածքի մեջ Ստեփան Զորյանը մանր-բուրժուական ինդիվիդուալի մի սահմանափակ առուրյայից բարձրացալ մեր կյանքի պատմական ըմբռնման աստիճանին: «Գրադարանի աղջիկը» մի ստեղծարարություն է, վոր լիովին սահմանազծում է հեղինակին նրա անցյալ գրվածքների հասարակական, քաղաքական գիրքերից և բնութագրում է նրան, վորպես խորհրդային լախազույն արձակագիր: Այս է այդ գրվածքի իրական արժեքը: Նրա թեման մեր հեղափոխության պատմական անցյալի մի գրվածքն է, վորի մեջ Զորյանն աշխատում է պատկերել հեղափոխական պաղպուղիան և նրա հերոսներից մեկի, բոլշևիզկայի տիպը: «Գրադարանի աղջիկ» հասարակական միջավայրը մի փոքրիկ քաղաք է՝ յերկաթուղային կայսրանով: Սակայն նա ապրում է քաղաքական հեղափոխության կացութայն այնպիսի մի հարուստ, պատմաշքը ման, վորի բնթացքում դեպքերը հաջորդում են իրար գլխապտույտ արագությունը: Հայ հակահեղափոխական բուրժուազիան ու Դաշնակցությունը հանդիսանում է յին Անդրկովկասյան հակահեղափոխությունից գլխավոր ջոկաններից մեկը և ամենափայլաղ ուսերեսխաններով աշխատում է յին ճնշել մեր կուսակցությունից հեղափոխական շարժումը: Զորյանի փոքրիկ քաղաքն ապրում է մայիսյան սոցիալիզմի ժամանակի և Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխության նախորդակը: Բնականաբար քաղաքական անցքերն ավելի փոքր մասշտաբով, սակայն իրենց բնորոշ կողմերով մենք տեսնում ենք նաև այդ

փոքրիկ քաղաքում, վորի դիմանկարը ավել է Ստեփան Զորյանը: Գրվածքի մեջ մի կողմից հանդես են գալիս հայ բուրժուա-կուլակային տարրերը և Դաշնակցությունը, վորոնք հիմարացնելով քաղաքն իր իրազեկության վորոշ շերտերին, ահարեկում են նրանց բոլշևիզմի ուրվակնով և այդ քաղաքն իր սովորական իրազեկում և Դաշնակցություն պրոփոպագիաները: Գրվածքում հրապարակ են իջնում դաշնակցական ինտելիգենտներ, հասարակության տականքներից կազմակերպված դաշնակցական տղերք՝ իրենց նույնանման «կոմիտարներով»: Ահա այդ «պետականություն» ու «հասարակություն» ներկայացուցիչները, վորոնք կրողում են հեղափոխությունից դեմ: Սակայն փոքրիկ քաղաքն ունի յերկաթուղային բանվորություն, հեղափոխական աշխատավորական շերտեր, վորոնք ձեռք են բերում յայն մասսաների համակրանքը և իրենց միջավայրից ստեղծում են իրենց հերոսներին՝ Պետրեներին, Արտուշներին, գրադարանի աղջիկներին:

«Գրադարանի աղջիկը» վիպակում տեսնում ենք գեղարվեստական-ճամարություններ ներկայացված դեպքերի սկիզբն ու վախճանը՝ իրենց հերոսներով: Իսկ գրվածքի հիմնական կոնֆլիկտները հեղափոխական դեպքերի զարգացումն է ու դատակարարային պայքարն այդ փոքրիկ քաղաքում: Սկզբում հեղինակը նկարագրում է քաղաքի կյանքը, բնությունը, հասարակական միջավայրն իր հերոսներով, վորոնց մեջ հանդես է գալիս գրադարանի աղջիկը: Զորյանի սխալն այստեղ այն է, վոր գրադարանի աղջիկը հանդիսանում է շարժման վողջ դեկավարը և գրվածքում չի յերևում կուսակցական հե

դափնոխական կազմակերպութեան հեղափոխական շտաբը: Առհասարակ դադարնի կազմակերպութեանը, վոր միաշփոթում ու կազմակերպում է այդ շարժումը: Իսկ պատմական ճշմարտութեանն այն է, վոր բոլշևիկյան կուսակցական կազմակերպութեաններն իրենց յետևից տանում էյին մեր աշխատավորութեան լայն զանգվածներին և պատրաստվում էյին Հայաստանի Նոյեմբերին: Սակայն այստեղ մենք գործ ունենք խորհրդային կոստելիգնտի ստեղծագործութեան հետ, վորը գեղարվեստական կտավի վրայ պատկերելով այդ պատմաշրջանի անցքերն ու դեմքերը և մանր-բուրժուական ինդելիվիտումից հասնելով հասարակական կյանքի պատմական ճանաչողութեան, այնուամենայնիվ տուրք է տվել իր անցյալի գրական տրադիցիային: Նա հրապարակ է բերել վիպակի պերսոնաժներից մեկին, գրադարանի աղջկա մորը, «չեզոք» մի անձնավորութեան, վոր այդ դեպքերի լոկ հանդիսատեսն է: Նրա համար հասարակական կյանքի յերևույթներն անբարձրնեյի յեն: Նա իր հայացքներով հին նահապետական կին է, «անկուսակցական» անձնավորութեան: Բայց առնչականորեն կապված է դեպքերի հետ, դիտում է վորպես հանդիսատես և Ձորյանն իր պատմվածքը պատմում է այդ չեզոք անձնավորութեան դեմքով: Բայց այդ հերոսուհու ակնոցները չափազանց անբարեհուս էն հասարակական պատմական կյանքի բարդ յերևույթները տեսնելու համար: Ահա թե ինչու մայիսյան ցույցերը, դադարնի աշխատանքը, հեղափոխութեան մյուս հերոսները դեմքերը քիչ խավար են ու մշուշապատ: Այդ հերոսուհին յուրօրինակ եվոլյուցիայի կատարում Ձորյանի հեռհեղափոխական շրջանի

գրվածքների մեջ: Նա գործոն մասնակցութեան չունի դեպքերի մեջ, սակայն իր դիրքով դառնում է պատճառաբանված և անհրաժեշտ մի տարր: «Հեղկոմի նախագահը» վիպակի մեջ նա հանդես է գալիս հակահեղափոխականների մոր դեմքով, վորին ըմբռնելի յեն միայն մայրական ղեկավարները: «Գրադարանի աղջիկը» վիպակում նա հանդես է գալիս վորպես գլխավոր հերոսուհու, վիպատրիայի մայրը: Նա «ոբյեկտիվ» անձնավորութեան է, իսկ նման «ոբյեկտիվիզմը» խանդարում է թափանցել յերևույթների խորքը: «Սպիտակ քաղաք»-ում այդ հերոսուհին յերևում է վորպես գլխավոր հերոսի աղախին: Այդ հերոսուհին իր վողջ կյանքով ու հոգեբանութեամբ պատկանում է անցյալին, «ափելորդ», պատիվ անձնավորութեան է, վորոնց յեթե չի համակրում, ապա չի յել մերժում հեղինակը: Այդ անձնավորութեանը վոչինչ չի անում, ամեն ինչ դիտում է, տեսնում, չի մասնակցում դեպքերին, սակայն որգանապես կապված է դեպքերի հետ, վորպես գլխավոր պերսոնաժների հետ կապված անձնավորութեան: Այդ հենց հեղինակի մեթոդից բղխող յերևույթն է անշուշտ:

Սակայն անհրաժեշտ է մատնանշել, վոր հեղինակի լիակատար համակրանքը հեղափոխութեան և իր հերոսուհու կողմն է, վոր քայլ առ քայլ աճում է վորպես գեղարվեստական տիպ կոնֆլիկտների ընդհանուր շրջթայի մեջ, համոզում է ընթերցողին ու հասնում է շարժման ղեկավարի դիրքին իր գեղարվեստական կատարելութեամբ: Գեղարվեստական գեղեցիկ պանորամայի մեջ ընթերցողը տեսնում է վարպետ վրձինով գծված իրար հաջորդող քաղաքական անցքերը: Կոնֆլիկտն սկսվում

և գրադարանի աղջկա հասարակական ազիտացիոն աշխատանքով՝ գրադարանում, ակումբում, քաղաքում, կայարանում, հետզհետե ծավալվում և քաղաքական գեպքերի հետ զուգընթաց և ընդունում և ակտիվ պայքարի կերպարանքը: Գայլ առ քայլ աճում են հեղափոխական շարժումն ու նրա շարժիչ ուժերը և այդ բոլորը պատկվում և մի խոշոր ակտով՝ մայիսյան ցույցերով: Այստեղ հեղինակը հաջող շարիխներով ու նուրբ հումորով ծաղրում և դաշնակցական ինտելիգենցիայի «ազգի, հայրենիքի, թշնամու» մասին արած բարբաջանքները: Ապա նկարագրում և գրադարանի աղջկա կրակոտ ճառը, վորի մեջ մասսաներին մատչելի ձևով շարադրվում և խորհրդային հանրակարգի սկզբունքները: Այստեղ անշուշտ հեղինակը մեղանչում և պատմական ճշմարտություն դեմ՝ բուլչեիկյան ցույցը ներկայացնելով փոքրաթիվ: Բայց չափազանց բնորոշ և պատկերված քաղքենիություն գիրքն ու այն պրովակացիան, վորոնք հրամցվում էին դաշնակ ազիտատորների բերանով: Հեղինակը դարգացնում և դեպքերը, ցույցին հետևում և բուլչեիկներին բանտարկությունը: Զորյանը ցայտուն գծերով բնութագրում և դաշնակ կոմիսարի գրասենյակն ու բանտը՝ իրենց «բարեմասնություններով»: Ընթերցողը բնորոշ շարիխներով տեսնում և դաշնակցական «պետություն» դեմքը:

Այդ բոլոր գեպքերը, վորոնք վերջանում են հեղափոխության հաղթանակով, կազմում են տրամաբանորեն զարգացող մեկ բնդհանուր շղթայի ողակները: Վարպետ վրձինով նկարած գեղարվեստական կտավի վրա, ընթերցողը տեսնում և մեր հասարակական կյանք

քի այդ շրջանի կարևորագույն գեպքերն՝ իրենց տիպական արտահայտությամբ, բայց քիչ ավելի փոքր մասշտաբով: Այդ գեպքերն որդանապես կապված են հերոսուհու կյանքի ու դործունեության հետ, վորոնց մեջ նա ասլրում ու աճում և վորպես գեղարվեստական տիպ և պատճառարանվում և իր դործունեությամբ ու տեմպերամենտով: Մենք տեսնում ենք իրական, եներթիկ, դործոն բուլչեիկուհու տիպը, վոր վարակում և բնթերցողին իր խարակտերով ու եներդիպով: Սակայն այդ հերոսուհին դեռ զուրկ չէ ինտելիգենտի վորոշ ստվերոտ գծերից, վորոնք չեն ազդում և չեն իջեցնում նրա տիպը, վորովհետև մանրունքներ են: Զորյանը հերոսներին ինդիվիդուալ ունակությունների դրսևորման, կոնֆլիկտներին հյուսման, կյանքի ճանաչողություն և կոմպոզիցիայի մեջ վարպետ և: Նա իր հերոսներին խիստ սահմանադժում և, բնութագրում և իրենց բնավորութամբ դործողության մեջ և հակադրում և իրար: Բնականաբար այդ հերոսներն աճում են, զարգանում են և հասնում են բարձր աստիճանի: «Գրադարանի աղջիկը» վիպակն այդ տեսակետից մեր խորհրդային արձակի բավագույն դրվածքներից մեկն է: Սակայն Զորյանի գրական ստեղծագործության բնորոշ գիծն և խոշոր ուչադրություն դարձնել դիսավոր հերոսին, իսկ մյուսներին բնութագրել վորպես Փոն: Այստեղ Զորյանը մասամբ պահպանել և այն, և Զորյանի մյուս հերոսները քիչ ավելի թույլ են դժագրված:

Չնայած մեր հիշատակած վորոշ սխալներին և թերություններին, «Գրադարանի աղջիկը» վիպակում խորհրդային ընթերցողը կտեսնի վարպետ հեղինակի վրձի-

նով նկարված մեր հեղափոխական անցյալի բաժանան
դեղեցիկ պատկեր: Դա պատիվ է բերում հեղինակին:
Այդ դրքի յերրորդ հրատարակութունն ինքնին վկա-
յում է, վոր այդ յերկը գրավում է խորհրդային ընթեր-
ցողների ուշադրութունը և նա արժե ընդունելութան:

Հ. ՄԿՐՏՁԹԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂԶԻԿԸ

(Մ Ի Կ Ն Ո Ջ Պ Ա Տ Մ Ա Մ)

Մեծ չի մեր քաղաքը, բայց սիրուն է. մի
 կողմը անտառ է, մյուս կողմը՝ սարեր, յետևը՝
 սարեր, առաջը՝ սարեր, ու եղ սարերի ու ան-
 տառի արանքում—մեր քաղաքը: Յերեք կողմից
 ել ջրեր են գնում խշշայով. յերբ գիշերը, քա-
 ղաքի քնած ժամանակ, դուրս ես գալիս դուռը
 ամեն կողմից ջրի խշշոց ել լսվում—խը՛ շշ, խը՛ շշ,
 խը՛ շշ... Ականջներդ թշշում են: Միայն են ժա-
 մանակ, յերբ պոեզը գրգռարով գալիս է ու շը-
 վացնում՝ ո՛ւր ո՛ւր—սար ու ձոր գմբդմբում են,
 եղ ժամանակ ել ջրի խշշոց չես լսում: Միայն
 եղ ժամանակ:

Լա՛վ քաղաք է մեր քաղաքը. ամեն տան
 առաջ ծառ ու բաղչա, ամեն հայաթում՝ մի
 ջրհոր... Կաթը առատ, ձուն՝ եփան. գեղե-
 րից բերում են ու թափում: Չմեռը ցուրտ է մի
 քիչ, բայց ամառը՝ հո՛վ. ամբողջ որը քամին
 ոլսվում է: Դրուսա է, անձրև ել շատ է գալիս,
 բայց վո՛ր արևը դիպչում է—արքայություն է

դառնում: Մի խոսքով ենպես չի, ինչպես Երեմիայի:

Հիմի կասեք, յեթե ենտեղ լավ եր, բա ինչո՞ւ ես յեկել Երեւան: Յեթե ինձ մնար, իհարկե, չեյի գա: Բայց աղջիկս ինքը յեկավ ետտեղ ու պատճառ եղավ, վոր յես ել գամ: Ինչքան ասի՝ տեղահան չըլեմ՝ չեղավ:

— Ձե, մայրիկ, ասում ե, անպատճառ պիտի դաս...

Դե, յես ել ունեմ-չունեմ ես մի աղջիկն ե: Մտածեցի՝ լավ չի ապրենք իրարից հեռու, ջոկ-ջոկ. լվացքով պահել, մեծացրել եմ, ուսում եմ տվել—հիմի թողնեմ մենա՞հ: Լավ չի, ասի ու եկա: Յեթե տղես՝ Յերվանդս կենդանի ըլեր—ելի վոչինչ—կարող եյի մնալ մեր քաղաքում: Բայց երեխես գնաց, կորավ անհետ: Վոչ բարով կովի առաջին տարին աղատվեց վորպես մինուճար, բայց մեր տանտեր-խալիս Միխակը ու տերտերի ատվակատ տղեն՝ Վաղարշակը, կանչեցին թե՛

— Արի՛, կամավոր գրվի: Մեր ազգը, ասում ե, պետք ե աղատենք:

Տղես թե՛

— Ինձ աղատել են, ասում ե, վոր յես մորս ու քվորս պահեմ: Յեթե կամավոր գրվեմ, բունրանց ո՞վ կպահի:

Նրանք թե՛

— Մերդ, փառք ասածու, դեռ աշխատում ե, լվացք ե անում, իրան ել կը պահի, քվորդ ել:

Իսկ յեթե մերդ կարիք ունենա, ասում են, մենք կը պահենք:

Ու սկսեցին ամանչեցնել երեխիս— Միխակը ջոկ, տերտերի ատվակատ տղեն՝ Վաղարշակը ջոկ. «Բա ամոթ չի քեզ պես յերիտասարդին, ասում են, եսպես ժամանակ տանը նստես. աշխարհքի ամեն ծերից, ասում են, հայ տղերքը կամավոր են գրվում—գալիս մեր հայ ազգը աղատելու—գու ետտեղ՝ չես ուզում գրվե՞լ»:

Ենքա՞ն ասին, ենքա՞ն գլուխը տարան, գրվեց:

Դրվեց ու գնաց մեռա՞վ...

Ե՛հ, լավ ե եդ բաները չհիշեմ, թե չեցավս կնորոգվի նորից: Դուք հարցնում եք աղջիկանս մասին:

Եղպես ուրեմն— վորդուցս հետո մնացինք յես ու աղջիկս: Ապրում եյինք, եդ վոր խալիսա Միխակ են ասում—նրա տանը: Դա ինքը հարուստ վաճառական եր. Թիֆլիզից միշտ վազոնով ճոթ-կտոր եր բերում ծախում: Մեծամեծ մարդկանց հետ նստում եր, վեր կենում: Լա՞վ ել հագնվում եր—կրախմալ, շապա, շորերը միշտ չոտկած ու վոնց վոր ասեղի տակից նոր դուրս քաշած: Մի խոսքով՝ մեր քաղաքի առաջավոր մարդկանցից մինն եր: Կովի ժամանակ ել կոմիտեյի մեջ դործ ուներ—կամավոր եր գրում, փող եյին հավաքում... Ինքը Միխակը իրա ընտանիքով—կնիկը՝ Լիզինկեն ու յերկու աղջիկը—Անիչկեն, Սոնիչկեն ապրում ե-

յին վերև, յես ներքև՝ պառվարում: Եդ պառ-
վարի յերեք աչքը նրանց ձեռին եր—փետ եյին
դարսում, ձմուխ պաշար եյին պահում՝ կա-
խաններով տանձ, խաղող, և ուրիշ—ուրիշ բա-
ներ. մի աչքն էլ իմ ձեռին եր. փոքրիկ, ցած
օթախ եր՝ պատերը սվաղած, պուր ջարփչից-
յերկու էլ նեղ յուսամուտ ուներ. ենքան ցածր
եյին, վոր դուրսը մարդկանց փոտներն ու
ծնկներն եր երևում մենակ: Յերկու մանեթ
քրե՛հ էյի տալի, շարաթը մի անգամ էլ լվացք-
ները անում քրե՛հ տեղ:

Եսպես ապրում եյինք—յես լվացք էյի ա-
նում սրա—նրա համար, Վիկտորը դպրոց եր դը-
նում: Յես բան չեմ հասկանում, բայց բոլորն
էլ ասում էյին, վոր լավ է սովորում, առաջա-
գեմ է: Կային մարդիկ էլ, սրինակ, Միխակն ու
կնիկը՝ Լիզինկեն—ասում էյին.

— Հանի աղջկանդ դպրոցից, թող մի տեղ
ծառայի, քեզ ոգնի. ինչ առևի տեր ես, վոր աղ-
ջիկդ ուսումի ես տալի:

Յես—չե՛: Ասում եմ՝ իմ հերը մի լավ
բան չի արել, վոր ինձ ուսում չի տվել. թող
մի քիչ էլ նեղ ապրեմ—մի աղջիկ ե՛՛ բան սովո-
րի... Են ժամանակ, յերբ Յերվանդս սպան-
վեց, Վիկտորը ավարտելու վրա յեր: Վեց—ութ
տարի սովորեց— եդ տարին նոր ավարտեց:
Յերբ ավարտեց— սրան—նրան խնդրվեցինք—զը-
բադարանումը պաշտոն տվին: Թեթե, մաքուր
գործ եր. գիրք եր տալիս կարդալու, գրում եր

ո՛ւմ գիրք տվեց, ո՛ւմից ստացալ. պատուած
գրքերը կարում եր, կայնում: Ու ինքն էլ՝ կար-
դում եր, կարդում, ինչպես դպրոց դնալու ժա-
մանակ: Ել գիրք չեր մնում գրադարանում—
բերում—կարդում եր: Յերեկը մինչև իրիկուն,
իրիկվանից մինչև կես գիշեր:

— Աղջի՛, Վիկտոր, հաց կեր:

— Մայրիկ ջան, եսքանն էլ պրծնեմ հետո,
եսքանն էլ կարգամ —նոր...

Ու կարդում եր տերտերի պես... Մեկ—մեկ
էլ կը նստեր կարդացածից կը պատմեր—ես
բանն եսպես եղալ, են բանը—ենպես: Պատմում
եր եդ գրքերը գրողների մասին. ես գիրքը գրո-
ղը, ասում է, եսպես հասարակ մարդու վորդի
յե յեղել, բայց տե՛ս ինչպես բաներ է գրել...
Կարդում եր հայերեն, ռուսերեն: Կարդում եր
ու պատմում ի՛նչպես են ապրում ուրիշ յեր-
կրներում, ինչպես են մարդիկ հարստանում,
ինչպես են աղքատանում... Կը պատմեր ես-
պես, կը պատմեր մեծ քաղաքների մասին, կը
պատմեր ինչ պլաթի ըլի հետո, մեղանից եսքան
տարի... Յես էլ, շատ բան չեյի հասկանում,
կըլսեյի—ու կասեյի.

— Ե՛հ. եդ բոլորը վոր մենք չենք տեսնում,
Վիկտոր ջան...

— Կը տեսնենք, մայրիկ, ասում է, կը տես-
նե՛նք մի որ...

Եդ ժամանակներն եր, վոր խաբար յեկալ,
թե Թադաւիտրին քցել են Թախտից: Ի՛նչ ուրա-

խուժեցան եր... Ամեն տեղ կարմիր գրոշակ կախեցին ու սկսեցին ճառեր ասել: Ժողովուրդը մի քանի որ փողոցներից տուն չեր գնում. ճառեր են ասում, ուրախանում, ծափ են տալի. «Կեցե՛ք՝ հեղափոխու՛թինը, կեցե՛ք՝ հեղափոխու՛թինը»: Յես չեյի հասկանում ինչ բան է եղ «հեղափոխու՛թինը», բայց մտածում եյի, վոր սրա վերջը վատ պիտի ըլի. անթագավոր յերկիր չի ըլի: Մի քանի որ հետո ել Հայկ Ազատյանը յեկավ Թիֆլիզից ու ճառ ասավ: Խոսեց, ամա՛ն, խոսեց, խոսեց, հալեց՝ գլուխները լցրեց: Թե ել՝ հին գլավա, հին նաչալնիկ, հին չիճովնիկ չպիտի ըլի. թե՛ դրանք բոլորը թագավորի մարդիկն են, բոլորին պիտի ըջել... Դրանից հետո եր, վոր պրիստավին բռնեցին, նաչալնիկին բռնեցին, միրավոյ սուղը փախավ, լեւնիչը փախավ, ստրաժնիկների պագոնները պոկեցին, մի քանիսին ծեծեցին, մի քանիսը փախան. տղերնքն ընկան փախողների յետեից. վազում են ու ուսերեն գոռում. «Դերձի յեվո, կալատի յեվո, մինեյ գիտեմ վոչ ինչ յեվո... Եղպես գոռալով՝ ձի ըջեցին ըստրաժնիկների յետեից ու գնացին... Նրանք գրնում են— շները նրանց յետեից...»

Ես բանը ես իմ աչքով տեսա արդեն...

Ինչի՞ յես եղպես անում, մտածում եմ, խեղճ ստրաժնիկները ինչո՞վ են մեղավոր. շատ ել թագավորին քցեցին—ստրաժնիկներին ի՞նչու են ծեծում: Վիկտորը թե՛

— «Եղպես ել հարկավոր ե դրանց, քանի վոր դրանք թագավորին ծախված մարդիկ են, ասում ե:

Դրանից հետո սկսեցին հակալ—հակալ անել ուրիշ մարդկանց ել. մի պիսը բռնեցին, թե մատնիչ է, մի ուս վարժապետ ել, թե (խոսքն ել լավ չեմ կարում ասի) պրավախատել ե...

Ու հետո՝ ժողովք, ժողովք, ժողովք... Ամեն՛ որ: Եղ որվանից Վիկտորիս քունն ել փախավ, հանդիսան ել: Յերեկը՝ գրադարան, իրիկունները՝ ժողով. իսկ գիշերները՝ չի գնում: Կարդում ե հայերեն, ուսերեն: Գրքեր, կագեքներ:

— Աղչի, բոլ ե. եղքան կարգալ չի ըլի, ասում եմ,—ինչքան կարգացել ես՝ հերիք ե: Մի բան վոր ավարտել ես. ել կարգալը ինչի՞դ ե պետք:

— Ե՛հ, մայրիկ ասում ե,—գու չեո հասկանում. դեռ ինձ հարկավոր ե շատ բան կարգալ: Ուրիշները, բարձր ուսում են առնում, Պետերբուրիս, Մոսկով են գնում— յես ել, ասում ե, գոնյա տանը կարգամ:

— Աղչի, ասում եմ, ախր աչքիդ լույսն ել կերթա, գլխիդ ել խելք չի մնա...

Ո՛ւմ ես ասում: Շորերը հագին կարդում ե, կարդում լամփի առաջ, հետո շորերը հանում՝ մտնում տեղը, լամփը դնում ե կողքին՝ սեղանի վրա, ու ելի կարդո՛ւմ: Գնում եմ, գիշերվա կեսին գարթնում—տեսնեմ՝

կարգում ե ելի. հիմի ել գիրքը բարձին ե գրել, յերեսի վրա ընկել ու կարգում ե: Ես—պես—իրան տվել եր գրքին. ինչ անում եյի, պոկ չեր գալի: Տեսնում եյի ճար չկա—մեկ—մեկ ել բարկանում եյի.

— Աղչի, աչքերդ չես խնայում, գոնյա նավթը խնայի. կրակի գին ե դառել. լվացք անելով, ասում եմ, քու նավթի հախիցն ել չեմ գա, եդ ինչ դու յես նավթ փշացնում:

Նա թե.

— Մյաջրիկ ջան, մի խանդարի. յես նավթը կառնեմ. եզուց բան պըտի խոսեմ ժողովում, թող նոթ քաղեմ:

— Աղչի, բոլ ե, ասում եմ, դու ինչ գործ ունես ժողովում. ինչ քու բանն ե դա: Հրե, ասում եմ, Միխակի աղջկերքն ել աղջկերք են— ինչի՞ ժողով չեն գնում, յեթե ժողովը յավ բան ե. չե՞ վոր նրանք քեզանից ամելի ուտում ունեն:

— Նրանք հեչ, ասում ե, ինձ նրանց թայր մի անի. նրանք չեն ել ծառայում. նրանցը են ե՞ պատրաստ ուտեն. ու պուդրի քսեն՝ ման գան:

Եդ մեկը գրուտ եր ասում: Տնաչենի աղջկերքը ամեն որ ոանդ—ուանդ պուդրի եյին քսում ու ես ի՛նչ ե—թատրոն, ես ի՛նչ ե—կլուբ, վակզալ. ամբողջ որը գոնթիկը բռնած՝ ման եյին գալի, բայց ժողով՝ սկի՛:

— Պուդրի յեն քսում, բայց քեզ պես

մազները չեն կտրում, ասում եմ, ու ժողով վազում:

— Մազերն ի՞նչիս են պետք, մայրիկ, ասում ե.— յես հո նրանց պես փեսի չեմ ման գալի:

— Բա ինչ, ասում եմ, աղջկանն ել փեսոս ե պետք: Են աղեքը բա, ասում եմ, վոր քեդ հեա ման են դալի՝ ի՞նչ են:

Ես ասում եմ հանաքով:

Նա թե.

— Ընկերներ են:

— Աղչի, ասում եմ, աղջկա ընկերը աղջկի կըլի...

— Ե՛հ մայրիկ, ասում ե, դու բան չես հասկանում:

Գրուտս վոր բան չեյի հասկանում: Ես—պես որերը գնում են— դա՛ ժողով, գրադարան, կարգալ: Մեկ—մեկ ել թաղի կնանիք խարաք են բերում, թե վիկտորդ ես ինչ տեղը խոսեց, են ինչ տեղը ճառ ասալ: Մնացել եմ չվարած: Ես աղջիկը գժվել ե, ասում եմ. սրա կապը պըտի քաշել: Մի որ ել մեր տանտեր Միխակն ե դանգատվում.

— Աղջիկդ կտար գլխել ե:

— Խի, ասում եմ, խալիա, ի՞նչ ե արել:

— Եստ ե յերես անել, ասում ե. ամեն բանի մեջ ե ընկնում, վիճում:

— Ինչ կա վոր, խալիա, ասում եմ. ջահել աղջիկ ե, հավեսի յե ընկնում, խոսում

ե. ուրիշների նման հո քեֆեր չի անում գիշերները...

— Չե մի՛, եղ եր պակաս, ասում ե. դու աղքատ կնիկ ես, քու լաղջիկը պետք ե համեստ ըլի:

Տեսա շատ ե բարկացած— ել բան չխոսեցի. ել չհարցրի, թե պատճառն ի՞նչ ե, վոր բարկացել ե: Նոր իրիկունը միայն իմացա, վոր վիկտորը դրան ժողովի մեջ «բուրջ-վաղ» ե ասել: Եղ ել ինքը վիկտորն ասալ:

— Վո՛ւյ, քուանամ յես, աղջի, ասում եմ.— դու նրա դեմ լեզու յես բանեցնո՞ւմ. դու ո՞վ ես վոր, ի՞նչ հոր վորդի յես, ասում եմ. ուզու՞մ ես մեզ տանից դուրս անի:

— Գլուխը քարը կըտա, ասում ե, թող դուրս անի. սրա պես տուն շատ կա:

Ու բարձր ել խոսում ե:

— Ձենդ կտրի, ասում եմ. վերևը կիմանան, կը խայտառակվենք:

— Նա ինքն, ասում ե, խայտառակութունից ազատվե՞լ ե, վոր մեզ ել խայտառակի:

— Ինչ ե արել, նրանից ել կարգին մարդ:

— Լա՛վ կարգին մարդ ես գտել, ասում ե.— խանութում յերկու աշակերտ ե պահում —մի կոպեկ չի տալի: Վոչ բարով հողաբարձու յե, բայց վարժապետների յերեք-չորս ամսվա ուճիկը ուշացնում ե, վոր եղ փողովն առուտուր անի, ոգտվի:

— Ինչ անենք, ասում եմ.— մարդ ե, փողի պակասութիւն ե ունեցել... Վարժապետների ուճիկը հո՞ չի կերել:

— Ե՛հ, մայրիկ, ասում ե.— դու բան չես հասկանում. ավելի լավ ե չխոսենք:

Ու իրան նորից տալիս ե կարդալուն:

Ի՛նչ պրտի ըլի ես աղջկա վերջը, մտածում եմ,— վոնց անեմ, վոր սրան ճամփի բերեմ ու եղ բաներից հեռու պահեմ: Բայց ի՛նչ. յես լվացքի, նա իրա գրադարանում— ի՛նչ ասես անում ե, ո՛ւմ հետ ասես խոսում ե:

Գործս պըճնելիս՝ մեկ-մեկ գալիս եյի գրադարան՝ ես կամ են բանը ասելու— տեսնեմ զա գիրք ե տալիս սրան—նրան— տղի, աղջկա, մարդու, կամ գրքերը նշաններ ե անում, շկաֆներում դարնում: Մեկ-մեկ ել դնում եյի, տեսնում —տղա, աղջիկ գլխին հալաքած՝ բան ե բացատրում—«եսպես գիրք ե, եսպես կը կարդաք». ամեն մեկին ջոկ, ամեն մեկին սուանձին... Մեկ-մեկ ել վիճում եր հասակն սուած մարդկանց հետ, վարժապետների հետ: Նա իր կարդացած գրքերից, նրանք՝ իրենց: Շատ ծամանակ ել ենպես բաներ եյին խոսում, վոր յես, անգետ կնիկ, բան չեյի հասկանում, բայց տեսնում եյի, վոր վիկտորը՝ լուրջին լեզվակոխ ե անում:

«Ն» ինչ բան ե ես աղջիկը, մտածում եմ, չի ել քաշվում իրա վարժապետներից»:

Յես նրա տեղը ամաչում եմ, բայց նա--
հե՛ջ:

— Չալում աղջիկ ունես, ասավ մի որ
վարժապետներից մինը, յերբ եղպես ելի գրա-
դարան եյի գնացել, լսում եյի նրանց զբի-
ցը. — Հախից կարում չենք գալ, ասում է: —
Մնում է, վոր նրան Լենինի մոտ զրկենք:

— Լենինն ո՞վ է, քա... .

Թե՛

— Բալչեկների մեծը:

Ես խոսքը մի քանի անգամ ականջովս եր
ընկել, բան չեյի հասկանում. ես անգամ ա-
ռի՛ մի հարցնեմ.

— Բալչեխին ի՞նչ է, ասում եմ, դա ո՞վ
է:

Թե՛

— Քու աղջիկը...

Ելի բան չհասկացա, բայց ամոթից չխո-
սեցի:

Եզ ժամանակներն եր, վոր յեկան թե՛
Թագավորի տեղ ժողով ենք ընտրելու: Մի
քանիսից ել լսել եյի, վոր նոր Թագավոր են
ընտրելու, բայց Վիկտորը թե՛ — վոչ մի Թա-
գավոր ել չենք ընտրելու, վոչ հին, վոչ նոր.
Թագավորի փոխարեն, ասում է, մի ժողով ե
լինելու (անունն ել գիտեմ վոչ ինչ), վոր
պետք է կառավարի յերկիրը: Եսպես բաներ:
Մի քանի որ հետո ել թե՛ ընտրում ենք: Բե-
րին մեր քաղաքի պատերին նոմերներ կադրին

— ամեն մինը մի գաղ, ու ժողովրդին իմաց-
րին, վոր ես ինչ որը գաք՝ նոմեր քցեք: Եզ
բանում Վիկտորն ել աշխատում եր. նա ել
թուղթ եր տանում՝ սրան-նրան տալի, ժողով
եր գնում, մի խոսքով ամբողջ որը հոլի պես
պտտվում եր: Եզ ժամանակ, մի որ մեր տան-
աներ Միխակի կնիկը — Լիզինկեն հարցնում է
ինձ.

— Սննա, ի՞նչ նոմեր պիտի քցես:

— Յես ինչ գիտեմ, ասում եմ. առանց իմ
քցելու ել յուր կերթան:

— Չե՛, ասում է, ինչո՞ւ. անպատճառ
պետք է զցել: Բայց վոր նոմերը կուզես քցել,
— հարցնում է ելի:

Գիտեմ վոչ, ասում եմ. Վիկտորս ասում
է հինգ նոմերը քցի:

— Չե, ասում է. — հինգ նոմերը չարժե.
չորս նոմերը քցի. իսկականը դա յե. մնացած-
ներն, ասում է, մեր ազգի հետ կապ չունեն,
դալբ են:

Վիկտորը սուն յեկավ — խոսքի մեջ պատ-
մեցի, թե Լիզինկեն եսպե՛ս-եսպե՛ս: Դա բար-
կացավ, կամներն առավ՝ քարերն ընկավ:

— Գլուխը քարովն է տալի, ասում է,
դալբը ինքն է ու իր մարդը, դալբը իրենց նո-
մերն է... .

Սոսեց եսպես, խոսեց, խոսեց, վերջը՝

— Դու կերթաս, ասում է, քեզ ինչ ասեի
եմ — են ել կը քցես... .

Նոմերը քցելու որը գնացի ուսումնաբան.
էնտեղ էյին քցում: Մի չորս-հինգ յաշիկ էր
դրված, են կողքին էլ հինգ վեց մարդ էր նրս-
տած: Ենքան էլ ժողովուրդ կար վոր... Ան-
հաշիվ: Մեր տանտերը— խալիա Միխակն էլ
եգտեղ էր: Ինձ վոր տեսավ՝

— Դու ել ես յեկել, Աննա. Ի՞նչ նոմեր ես
քցելու:

Յես ձեռիս նոմերը ցույց տվի:

— Դա հեչ, ասում ե. առ սա քցի...

Ու տվեց մի ուրիշ թուղթ: Ենքան մարդ
կար, վոր ամոթից էլ չուղեցի ասեմ, թե վիկ-
տորս եսպես ե ասել: Գլուխը քարը, մտածե-
ցի, իմ քցելովը կամ չքցելով ի՞նչ պլտի ըլի,
քցեմ՝ կորչի, յես գնամ իմ բանին: Եսպես
մտածելով՝ առա ու քցեցի...

Հետո վոր ես բոլորը վիկտորն իմացավ—
ինձ վրա չա՛տ բարկացավ: Շա՛տ:

— Դու, ասում ե, անհասկացող կնիկ ես.
քու լավն ու վատը չես հասկանում. գնացել
ես քու թշնամիներին ձեն տվել:

— Խի՞, ի՞նչ թշնամի, ասում եմ, — ինձ
համար մին է. մի տեղ նոմեր պլտի քցեմ—
քցեցի:

— Սկի էլ մին չի. ասում ե.— հենց բանն
էլ են ե, վոր մին չի. դու պետք ե, ասում
ե, ձենդ տասնրան, ով քու մխտին մտածում
ե, ով քեզ կարող ե պաշտպանել:

— Ե՛հ, ասում եմ, — աստված իմ պաշտ-

պանը խլեց են որից, յերը Յերվանդս սպան-
վեց. ել ո՛ւմ դարդն ե կարել, ասում եմ,
ինձ պաշտպանի. եսպես եկել եմ, եսպես էլ
կերթամ:

Նա թե՛

— Ձե, սխալվում ես. նոմեր հինգը ե՛ն
ե, վոր քեզպեսներին պաշտպանի:

— Յես բան չեմ հասկանում, ասում եմ:

— Դե վոր չես հասկանում, հասկացողին
լսի:

Ու բարկացավ, վոտները խփեց գետնին.
խռովեց ինձանից: Խռովեց վոչ թե ենպես,
վոր չեր խոսում. նեղացավ, թե ինչո՛ւ իրան
չեմ լսել:

Եղ ժողովն էլ, վոր վերջացավ—գա սկսեց
մի ուրիշ բան: Հերիք չեր մինչե կես գիշեր
կարդում էր — հիմի էլ առավոտները վաղ վեր
եր կենում՝ վազում վակզալ, գալիս էր զոռով
մի թաս չայ խմում ու՝ գրադարան...

— Եղ վակզալ ինչի՞ յես գնում, աղչի,
հարցնում եմ:

— Գրադարանի համար գիրք, կաղեթ
ստանալու...»:

— Հապա դու ասում էյիր փոշտով ե՞ք
ստանում:

— Հիմի մի մասն էլ պոեզով ե գալիս, —
ասում ե:

127
43



Բայց տեսնում եմ, եղ բերած թղթերը գնում են տուն ու ենպես գնում գրադարան:

Մեկ-երկու, մի որ ել հարցրի.

— Բա ինչո՞ւ ես թղթերը հետդ չես տանում:

— Թող մնա ասում ե, հետո կը տանեմ:

Եղպես ել գնում եր իրիկվա պոեղին: Մեկ-մեկ ել տեսար, բերեց հրես մի կամ յերկու աղա կամ աղջիկ իրա նման մաղերը կտրած:

— Մայրիկ, ծանոթացիր, իմ ընկեր ես ինչը:

Հետո ել թե՛

— Ընկերը քնելու տեղ չունի, մեր տանը պրտի քնի:

Ինչ ասեմ. տեսնում եմ անտուն աղերը են, տեղ եմ պցում, մարուր սավան եմ փռում, իրա Վիկտորի բաժինքի բարձը գնում եմ գրանց պիստակը: Թող փափուկ ըլի, ասում եմ, սրանք ել մի մոր վորդի յեն, փափուկ բարձի սովոր, ինչ անենք, վոր ետոր ոտարութիւն են գուրս յեկել... Մի գիշեր քնում են գրանք, առավոտը գնում:

Ո՞ւր գնացին, աղչի, հարցնում եմ Վիկտորին:

— Վոչինչ, մոտիկ գեղը գնացին, ասում ե:

Մի քանի որ հետո եղ աղեն, եղ աղջիկը ետրից են գալիս: Կապոցով թղթեր են բերում, ինչ վոր բան են փախում: Կամ թե

Վիկտորը վահագլից բերած թղթերը սալիս ե դրանց — գնում են: Մի քանի որ, մի շարաթ. սվելի աներևույթ են ըլում — մեկ ել հանկարծ լուս ընկնում: Չե՛. տեսնում եմ դրանց արածը ուրիշ բան ե. ինչ-վոր փափսում են, քշփչում են թագուն: Տեսնում եմ, վոր մեր տունը յեկողները մթնով գալիս են, առավոտը վաղ գնում, ենպես վոր հայաթում դեռ մարդ գարթնած չի ըլում: Գնալիս ել միշտ խլչկոտում են, իրանց չորս կողմը նայում, թե մարդ հո չի տեսնում իրանց:

«Չե՛, մտածում եմ, սրա վերջը վաս բան ե ըլելու: Ես աղջիկն իմ գլուխը փորձանք ե բերելու:

Եղպես ել յեղավ:

2.

Ինչ վոր պատմում եմ—մայիսին եր, հենց մայիսի իրա առաջին որը՝ մայիսի մեկին: Մինչև եղ՝ յես, մեղքս ինչ թագցնեմ, չեյի իմանում, վոր մայիսի մեկը տոն ե, բայց լանից դուրս եկավ, վոր եղպես ե — տոն ե:

Ինչե՛ր պատահեցին եղ որը, ամա՛ն... Ամենից առաջ եղ մայիսի մեկի առավոտը յերկու աղա եկան՝ Վիկտորին կանչեցին: Վիկտորը դրանց հրավիրեց ներս: Եկան գրանք, յերկուսն ել ըլուզ հագած ջահել աղերք: Եկան թե «ընկեր Վիկտոր, դրոշակը տու՛ր...»:

Մտաքցա ասեմ, վոր մի քանի որ առաջ
Վիկտորը մի կարմիր կտոր եր բերել ու յեր-
կու որ վրեն չարչարվել, տառեր եր գրել, թե
«կեցցե՛ հեղափոխութիւնը», մին ել, գիտեմ
վոչ, ինչ «կեցցե՛»։ Սպիտակ կտորից տառեր
եր կարել ու կարմրի վրա կպցրել։ Ենպես
պարզ եր յեղել վո՛ր — ել պրծար։

Տղերքը շատ հալանեցին. իրան Վիկտոր-
րին ել մի քանի անգամ «կեցցե՛, ասին, ընկեր
Վիկտոր. շատ լավ ե գուրս յեկել...»։ Վիկ-
տորընդպես բաների մեջ ամաչկոտ եր. յերբ
իրան գովեցին՝ կը կարմրե՞ր... Ենպես ել ես
անգամ — կարմրեց պուտի պես ու տղերանցը
թե՛

— Ծատ մի խոսեք. խոսելու ժամանակը
չի. ծալած տարեք, յես ել հիմի կը դամ։

Տղաներից մինը ծայեց եզ կարմիր կտո-
րը, գրեց կոնատակը, ու դնացին։

— Եզ ո՞ւր են տանում, Վիկտոր, — հարց-
րի աղջկաս, յերբ տղերքը դնացին։
Նա թե՛

— Ետորվա տոնի համար պետք ե։

Յես առաջի որը կարելիս բան չհարցրի,
կարծում եյի գրադարանի համար ե, վորով-
հետե մի յերկու անգամ ել, թագավորին քցե-
լուց հետո, նա եղպես բան կարեց գրադարա-
նի համար։ Բայց ես անգամ, յերբ տեսա տղեր-
քը թագուն տարան, ուզեցի իմանալ ինչ կա։

— Ի՞նչ տոն ե, ասում եմ, Վիկտոր ջան։
Նա թե՛

— Ետոր մայիսի մեկն ե։

— Մայիսի մե՛կը... Դա ինչ տոն ե, աս-
ում եմ։ — Ես գիտեմ Աստվածածնա տոն,
Լուսավորիչի տոն, Քառասուն մանկանց տոն,
բայց եզ մայիսի մեկը ի՞նչ բան ա...

— Մայիսի մեկը, ասում ե, բոլոր աշխա-
տող մարդկանց տոնն ե։ Աշխարհի բոլոր բան-
վոր, աշխատող մարդիկ ետոր ես տոնը կա-
տարում են։ Հիմի բոլոր քաղաքներում, աս-
ում ե, Յեվրոպի կողմերը, Մերիկայում էս
տոնը տոնում են ետոր։

— Ե՛հ, մեր Եջմիածնի որացույցում, աս-
ում եմ, եզ տոնը կա՞ր գրած։

— Եջմիածնի որացույցում ինչու պըտի
ըլի, ասում ե։ Վարդապետները իրանք ուրի-
չի աշխատանքը ուտող մարդիկ են, ինչո՞ւ
պըտի ես տոնը գրեն։ Նրանք, ասում ե, ի-
րանց չեղած, սուտ սրբերի տոնը կգրեն, վոր
ժողովրդին խաբեն, խավար պահեն։

— Սո՛ւս, աղչի, ասում եմ, — ջահել հո-
գուղ մեղք մի՛ անի. «սուտ սուրբը» վո՞րն ե.
վարդապետները, ուրեմն, ենքան անխելք մար-
դիկ են, վոր սուտ սրբերի անունը գրո՞ւմ են
որացույցում։

— Չե ասում ե, անխելք չեն — կեղծավոր
են. գրում են, վոր քեզ նմաններին խավար
պահեն, վոր յեկեղեցի դնաք, մոմ վառեք,

աջահամբույր տաք, իրենց ել սրբի տեղ
գնեք: Թե չե, ասում ե, վո՛չ մի սուրբ չկա-
բոլորն ել սուտ ե, վարդապետների հնարածը:

— Բա ուրեմն, ասում եմ, աղչի, Հիսու-
սը, Մայրամ Աստվածածինը, Լուսավորիչը
սու՞տ են:

— Հա՛, ասում ե,— բոլորն ել:

Յես չճեցի:

— Ձեռք կարի, աղչի, յերկնքից քարե
կարկուտ կը թափի մեր գլխին: Մեղա՛, մե-
ղա՛, տեր...

Յես վախեցած, սարսափած խաչակնքում
եմ յերեսս, նա ծիծաղում ե:

— Խեղճ մայրիկ ջան, ասում ե, զուր մի
չարչարվի, զուր ձոներդ մի հողնեցնի՝ խա-
չակնքելով: Վերև, ասում ե, վո՛չ աստված
կա, վո՛չ սուրբ: Մեր վերևը՝ մենակ, Մեխակն
ե իր անամոթ կնկա ու լիբբ աղջկերանց հեռ-
ենտեղ՝ վերև ել բան չկա:

— Աղչի, ձեռք, ասում եմ,— կխմանան,
տանից դուրս կանեն:

— Թող համարձակվե՛ն, ասում ե.— Ծու-
տով ցույց կտանք դրանց, թե ո՛վ ում դուրս
կանի: Ուրիշի աշխատանքով չինած տանը
նստել են...

Ոտեց եսպես, շարերը հագավ ու գնաց: Բայց
նրա ասածները սրտիս կպան, թե վերևը վո-
չինչ չկա, աստված չկա, սուրբ չկա, վար-

դապետները կեղծավոր են, Եջմիածնի որա-
ցույցը սուտ ե գրել: Առաջ ել, մեկ-մեկ, եղ-
պես բաներ եր խոսում— բանի տեղ չեյի
գնում: «Ձահե՛լ ե, ասում եմ, խելքին զոո ա
տալի»։ Բայց ես անգամ ենպես բաներ ասավ,
վոր— ինձ դիպավ— բոլոր սրբերը սուտ են,
Գրիգոր Լուսավորիչը սուտ ե... Իմ հերը
ասում եր, վոր Գրիգոր Լուսավորիչը բոլոր
սրբերի մեծն ե, Քրիստոսից հետո, իսկ Եջ-
միածնի ոսկե տառերով որացույցը, ասում
եր, Աստվածաշնչի միջիցն են հանում. հիմի-
սու՞տ ե... մեղա քեզ, աստված, մեղա, ա-
սում եմ.— ջահե՛լ ե, խելքից թեթև... Կանգնե-
ցի, մի՛ քիչ աղոթեցի: Հետո ուղեցի մոմ առ-
նեմ, գնամ Ժամ՝ վառեմ — փոշմանեցի:

«Եսքան վառեցի, մտածում եմ, վոր Յեր-
վանդիս հարեհաս ըլի իր դժվար տեղում—ի՞նչ
արավ, վոր հիմի յել վառեմ: Դրուստ ե ասում
Վիկտորս, մտածում եմ— յեթե նրանք՝ եզ
սրբերը մի զորութիւն ունեյին — Յերվանդս
անտեր չեր կորչի ստար հողի մեջ»...

Յերվանդիս վոր հիշեցի՝ սիրասս փուլ
յեկավ: Նստեցի մի քիչ լաց եղա, հետո վեր
կացա, ասի՝ մի գնամ տեսնեմ ինչ բան ե ես
մայիսի տոնը, վոր Վիկտորը, նրա ծանոթ
սղեքը եսպես թագուն պատրաստվում եյին,
չեյին ուզում ուրիշները տեսնեն իրանց արա-
ծը, իսկ հիմի ուզում են դուրս գան փողո-
ցում կատարեն: Կամ ի՞նչ տոն ե, ասում եմ,

վոր յեկեղեցում, դպրոցում չեն կատարում,
ուզում են հենց անսլառաձառ փողոցում:

Մտածեցի ու գնացի:

Գնացի՝ տեսա — մեծ փողոցը լիքը ժողովուրդ. մեր, մանուկ եղտեղ ե: Ասեղ քցես՝ դետին չի ընկնի: Դեռ մի կողմից ել դալի՛ս են, դալի՛ս են... Որն ել լավ որ ե. անուշ, պայծառ — ձվածեղ: Մարդու սիրան իրան-իրան բացվում ե — ենքան լավ ե որը: Մի կողմն ել մուգիկն ե ածում, երեխեքը խաղ են անում, յերգ են ասում, ու եղպես ժողովրդի մեծ մասը կիրակի որվա շորեր հագած սպասում են: Յես ել դրանց հետ: Բիչ հետո տեսնենք հրես ուսումնարանի աշակերտները եկան իրանց մուգիկով: Չորս-չորս կանգնած՝ եկան, անց կացան. նրանցից յեղը մի ուրիշ խումբ, ելի՛, ելի՛. ինչքան աշակերտ կար՝ եկավ — անցավ — ամեն մի խումբը իր դրոշակով, իր յերգով... Աշակերտներից հետա եկան ծառայողները՝ իրանց խաչփառի նման դրոշակներով, հետո գորքը՝ կանաչ, կարմիր նարնջի գույնի մեծ-մեծ դրոշակներով, մուգիկով... Մրանք յեկան անցա՛ն, նո՛ր, դրանցից յեղը, յերեաց մի Փուրդոն՝ դարբնի՛ փուքան ու գնդանը վրեն. երկու մարդ ել, դարբնի պես հագած՝ յերկաթ են ծեծում — թրա՛խկ-թրա՛խկ, թրա՛խկ-թրա՛խկ: Մթամ բան ենք շինում: Ենպես ել խփում են վորտաք երկաթից կրակի պեծեր են թռչում...

Դրանք ել անցան: Դրանցից յեղը մի Փայտոն եկավ — մի աղջիկ միջին կանգնած. սպիտակ չորով, մազերն ուսերին թափած՝ ծաղիկ ու կանաչ ե շող տալի չորս կողմը: Դա ել, ասին, մթամ մայիսն ե, ծաղիկ ու կանաչի ամիսը... Ինչե՛ր չեն հնարում մարդիկ: Հա՛, եդ ել վոր անցավ — եկավ մի ուրիշ խումբ, ելի մի ուրիշը, վերջն ել մի խումբ՝ հենց են դրոշակով, վոր երեկ Վիկտորը կարել եր... Տառերից ճանաչեցի — սխալտակը կարմրի վրա: Դրոշակը կարել եյին մի փետի ու բարձրը բռնել, ենպես վոր քամին Փոփոացնում, բացում եր, ու ամեն բան պա՛րզ երևում եր: Կողքիս կանգնած մի քանի մարդիկ կարգացին դրա վրան դրածները ու ծիծաղեցին.

— Ը՛հը. ե՛ս ել բալչեիկները. երկու ջուխտ մի կենտ...

Դրուստ վոր դրանք շատ չեյին. մի քառսուն-հիսուն հուլի. բոլորն ել մի-մի կարմիր լենթ դռներին կպցրած: Մինչև եդ Վիկտորիս չեյի նկատել. դա ել, տեսնեմ, դրանց մեջ. հենց դրոշակը տանողի կողքին: Գլխին մի կարմիր շոր ե կապել, մազերը տակից կախել: Մեծ մասը ջահել տղերք են, քիչ մասը՝ մազով միբուքով մարդիկ. դրանց մեջ ճանաչեցի վարժապետին, մեկ ել քաղաքի ֆանա վառողին: Բոլորը տղամարդ, յերեք աղջիկ: Են յերկու աղջիկն ել, Վիկտորի պես դրուխները կարմիր են կապել: Վիկտորին դրանց

մեջ տեսնելով՝ բարկացա ինձ ու ինձ. «Դու
ի՞նչ ունես դրանց մեջ, ա՛յ աղջիկ»...

Դրանց տեսնելով խալխն ել սկսեց խոսել.

— Կազ իշով քարվան են խառնվել:

— Շոր չեն գտել, կարմիր են կապել:

— Մարդ են զարմացնում:

Եսպես բաներ: Մի քանիսը շվացնում են,
հուշտ են անում, ինչ-վոր խոսքեր են ասում—
չեմ հասկանում: Բայց նրանք—հե՛չ: Բանի
տեղ չեն դնում: Եկան-եկան ու մին ել, բոլո-
րը, քառսուն-հիսուն հոգին միասին սկսեցին
յերգել:

— Պա՛հ, պա՛հ, տեսե՛ք, տեսե՛ք Անտիր-
նացու են յերգում, — ասում են խալխը ու ծի-
ծաղում:

— Իսկ նրանք— հե՛չ. վեջները չի. յերգո՛ւմ
են: Հետո իմացա, վոր եդ Անտիրնացուր
հենց իրենց բալչևիկների յերգն է յերգել:

Մրանք վոր յերգն սկսեցին ու անցան,
նրանց յեակից յեկողները վեր կալան մի ու-
րիչ յերգ: Եդ վոր յերգեցին, խալխը թե՛

— Փափախները վեր կալեք: «Մեր հայ-
րենիքն» է: Ամբողջ խալխը փափախները վեր
կալան ու յերգողների հետ զնացին վակզալ,
քանի վոր յեկողը ենտեղ եր դնում: Մալխը պոկ
եկավ զնաց, յես ել դրանց հետ:

— Ճառ են խոսելու, ասում էյին:

Ասի՛ քանի վոր ասունից գուրտ եմ յեկե՛լ,

անկու ել բան չունեմ, գնամ տեսնեմ ինչ են
ասելու: Կարելի չե մի սրտաշահ բան են
ասում — լեւեմ:

Գնացի:

Վակզայի մոտ, բաց դաշտում, ենքան ժո-
ղովուրդ եր հավաքվել — ել պրծար: Յես ա-
ռեմ՝ հազա՛ր, դու ասա՛ տասը, քսան հազար:
Ավելի շատ, քանց թագավորին քցելու որը:
Միխակիր, կնիկը աղջկերանց հետ եղտեղ են:
Չուզված, զարդարվա՛ծ: Աղջկերքը գոնտի-
կով. կնիկը շլապով: Ինձ վոր տեսան՝ զարմա-
ցան.

— Աննա՛, դու ել ես եկե՞լ: Բա վոր հա-
յաթը թարանե՞ն:

— Բան չի ըլի, ասում եմ, — հյա տես-
նենք ինչ բան է սա:

Դրանք զնացին առաջ, յես մնացի: Կանդ-
նած թամաշ եմ անում, թե ի՞նչ է ըլելու:

Եսպես — ժողովուրդը եկել-կիտվել է ու
մտղիկը սծում է մեջտեղը: Ածեցին ենքան,
մինչև վոր բոլոր ժողովուրդը հավաքվեց, նոր
մինը — մի կրավաճալով մարդ, շլապեն ձեռին
բարձրացավ ժողովրդի միջից:

Իսկույն ճանաչեցի. տերտերի ատվակաա
սպեն եր — Վաղարշակը, են, վոր մի քանի
տարի առաջ իմ տանտեր Միխակի հետ Յեր-
վանդիս կամավոր գրեց: Վեր կացավ դա — ես
կողմը նայեց, են կողմը նայեց, հազաց ու
սկսեց.

— Ընկերներե՛ր, ասում ե, կսոր ամբողջ աշխարհը ես տոնը տոնում ե: Ես տոնը, ասում ե, են տոներից ե, վոր բոլորը տոնում են: Սա, ասում ե, աշխատող մարդկանց տոնն ե...:

Ու խոսեց, խոսե՛ց: Բայց ենպես գրափառ եր խոսում, վոր խոսածի կիսից ավելին չէի հասկանում:

Վերջն ել շլապեն բարձրացրեց ու՝

— Կեցցե՛, ասում ե, մայիսի մեկը:

Մուզիկն սկսեց ածել, մարդիկ փափախները վերցրին:

Դրանից հետո խոսեց մի ուրիշը — մի վարժապետ: Դա ել ենպես բաներ ասավ, ինչ վոր տերտերի ատվակատ աղեն — Վաղարշակը, ու նրա պես ել վերջացրեց. — «Կեցցե՛ մայիսի մեկը»: Վարժապետից հետո խոսեցին ուրիշ մարդիկ. վո՛րը հանդարտ, վո՛րը ձեռներն ու գլուխը թափ տալով, բայց բոլորն ել վերջացնում էին իրար նման. — «Կեցցե՛ մայիսի մեկը»: Բոլորի ձառից հետո ել մուզիկը ածում եր, մարդիկ փափախները վերցնում էին, ծափ տալի կամ ուռա կանչում: Խոսեցին եսպես մի հինդ-վեց հոգի, մին ել ըհը՝ — ժողովրդի միջից խոսողների տեղը բարձրացավ... Վիկտորը՝ կարմիր շորը գլուխը կապած, կտրած մազերը ուսերին կախած, իրա կարած գրոչակը ձեռին...:

Դրան վոր տեսա եղպես — սիրտս տեղահան եղավ:

«Վա՛յ, մազդ կարի, աղջիկ, մտածում եմ. — Ես ինչ խայտառակ բան ե: Դրա համար ես սղերանց հետ ընկե՞ր»...:

Մտածում եմ ու ամոթից ուզում եմ գետինը մտնեմ. աչքս չեմ կարում վեր բարձրացնեմ:

Մարդիկ հարցնում են իրար:

— Ես ո՞վ ա, ես ի՞նչ աղջիկ ա...:

Մինն ել թե՛

— Դրա գարանի աղջիկն ա...:

Դրանք խոսում են, յես ինձ ուտում եմ — «Գետինը մտնես, աղջիկ, աղջիկն ել եղպես բան կանի՞»: ... Ծոներս տակիս գողում են, սիրտս խաղս ե յեղել: Լեզուս բերանումս չորացավ: Մեռած եմ ու թաղած չեմ: «Վոր Միխակը տեսնի — ի՞նչ կասի», մտածում եմ...:

Վերջը, ինչ յերկարացնեմ, դա կանգնեց գրոչակը ձեռին, կարմիր շորը գլուխը կապած, կանգնեց ու՝ «Ընկերներ, ասում ե, (ենպես ել համարձակ, վոր ջիչ ե մնում՝ գնամ մազերը պոկեմ). են, ինչ վոր եստեղ խոսեցին, ասում ե, — եղ բոլորը կեղծ ե, վորովհետեւ, ասում ե, — խոսքով ուրիշ բան են ասում ես պարոնները (քանի գնում՝ ենպես համարձակ ե դառնում, իսկ յես ճաքում եմ), գործով ուրիշ բան են անում... Մրանք ասում են թե՛ բոլոր աշխատողները, բանվորները պետք ե միանան, բայց, ասում ե, իրանք չեն ուզում միանան ուս բան-

վորներքի, մի խոսքով ոուս խալխի հետ, վոր կուխում են, ասում ե, բոլոր մարդկանց բախտավորացնելու համար: Սրանք, ասում ե, վոր միայն չեն ուզում միանան նրանց, այլ, մինչև անգամ, ոգնում են նրանց թշնամիներին: Ասրանք, ասում ե, ինչ վոր ասում են—սուտ են ասում: Թող մեր ժողովուրդն եզ բանը լավ իմանա: Սրանք մեր ժողովրդի թշնամիներն են, ասում ե:

Նա խոսում ե՝ յես ամսթից պետինն եմ մտնում: Նա խոսում ե, յես ինձ ուտում եմ: «Գե... տխր մտնես, աղչի. ինձ խաղք ու խայտառակ արիր, մտածում եմ.—գու ինչ հոր վորդի ես, վոր եղպես լեզու յես բանացնում. գու ինքը աղջիկ՝ դուբս ես յեկել տղամարդկանց դեմ: Վա՛յ անամոթ. բա քու յերեսի փարդեն պատուել ե եղքա՞ն: Ել վո՞նց երեսամ, մտածում եմ, յես մարդամիջի»...

Առաջի խոսողները՝ բոլորը տոնի մասին եյին խոսում, սա՛ ժողովրդի, կառավարության:

— Ես ինչ կառավորութիւն ե, ասում ե,— շարունակ կուխ ե անում ու ժողովրդին ճնշում: Եսպես կառավարութիւնը, ասում ե, ամէլի լավ ե չըլի:

Ուրիշների ասածները պարզ չեյի հասկանում, բայց դրա խոսքերը շատ լավ եյի հասկանում. ամեն մի խոսքը վոնց վոր գրավանքա քաբի պես գլխովս տան... Մին ասի՝ թողնեմ—

դնամ տուն, մին ել թե՛ տեսնեմ հրա ի՞նչ պըտի ըլի սրա վերջը: Հանկարծ, մտածում եմ, չը բռնեն ու ծեծեն սրան, դերձակ Մակարի տղի պես, թե իսի՞ ես մեր դեմը խոսում:

Նա խոսում ե—յես հարկում եմ կանգնած տեղս: Ինչքան խոսեց—չեմ կարա ասեմ, բայց վոր վերջացրեց՝ սրտիցս վոնց վոր մի քար քցես—թեթեացա: Սրան ծափ տվին միայն մի քանի մարդ, իսկ մուղիկը սկի ձեն չհանեց: Հետո մարդիկ սկսեցին զլլլալ, գոռացին, ճչացին: Տոնը կարծես խանդարվեց: Յերբ դա խոսեց, ցած եկավ, ասի՝ մի դնամ թուք ու մուր տամ, բայց չկարացի ճամփա գտնեմ: Ամոթից՝ ե՛լ չմնացի: Ուղիղ եկա տուն: Վա՛յ եմ տալի պլխիս ու մտածում, թե ես ինչ որի հասա յես, ես ինչ խայտառակություն եր. մինչև ետոր նամուտով ապրել ենք, հիմի որ—ծերության մի մատը մեզր դառնամ քաղքի միջին...

Եսպես, տան առաջ նստած, մտածում եմ ինձ ու ինձ, մին ել տեսնեմ հրես Միխակն ու կնիկը՝ աղջկերանց հետ յեկան: Զուգվա՛ծ, զարգարվա՛ծ: Աղջկերքը գոնտիկով, կնիկը՝ շլապով: Միխակը գլուխս տեսավ թե չե՛

— Պարզերես կենաս, Աննա,—ասում ե,— լավ աղջիկ ես մեծացրել:

Ենտեղից կնիկը.

— Աղջիկ ել ասում ե՛... Նա աղջիկ չի՛ Կուպր կտրած զարաչի աստ՛:

Ու հետո ինձ.

— Աղջի, ասում ե, եղ վո՞նց եղավ, վոր քեզանից եղ ազգի դավաճանը ծնվեց:

Հերը, մերը խոսում են—աղջկերքը ծիծաղում:

Ի՞նչ ասեմ: Ամոթից ելի դետինն եմ մտնում:

Միխակը նորից.

— Եսորվա որը, ասում ե, աղջիկը փչացրեց:

Կնիկն ել թե.

— Եղպես աղջիկը չըլի, ամբիլի լավ ե. իրա անունն ել խայտառակեց, քունն ել...

Ամոթից ելի՛ բան չեմ խոսում. յես ել մտածում եմ, վոր նրա արածը խայտառակութուն եր: Մտածում եմ ու սիրտս քիչ ե մնում բերնովս դուրս գա: Վոր ձեռս ընկնի՛, բզկիբզկի կանեմ, կրծովատեմ: Թո՛ղ մի գա, ասում եմ, տե՛ս նրան ի՛նչ եմ անելու. շան լավիը կը թափեմ գլխին. ենպես բան անեմ, վոր—չունը ձեռիցը հաց չառնի: Դրա համար ե մազերը կտրել. դրա համար ե ասում աստված չկա՛, սրբերը սո՛ւտ են...

Մտածում եմ եսպես ու տրորվում մինչև իրիկուն: Նոր իրիկունը միայն դա եկավ. ուսնդը թուած, հեալով տուն մտավ ու՛

— Մայրիկ, ես գիշեր յես տուն չեմ գալու. ինձ չսպասե՛ս:

Մտնելուն պես ուզում եյի հարձակվել դրա վրա, մազերը պոկել—դա եղպես խոսքե՛ր:

Ջարմացա:

«Ես ել մի նոր խայտառակութուն», մտածում եմ:

— Խի՞, աղջի, խի՞ չպիտի գաս:

Թե՛ «ինձ ուզում են բռնեն»:

— Ո՞վ:

— Կառավարութունը:

— Խի՞:

Թե՛ «Եսորվա ճառիս համար»:

— Ա՛յ, ասում եմ, աչքդ ել են հանելո՞ւ: Շատ ել լավ կանեն: Դու ո՞վ—ճառ ասելն ո՞վ. ի՞նչ հոր վորդի ես, ի՞նչ պաշտոնի տեր ես, վոր ճառ ես ասում: Դրա համար ես, ասում եմ, մազերդ կտրել, ջահել տղերանցը խառնվե՛լ...

Սկսեցի մի վանամ դրան—դա, ուսնդը քցած, ձեռը թափ տվեց:

— Շատ մի՛խոսի, մայրիկ, ասում ե, գլուխ չունեմ. դու բան չես հասկանում. յես դնում եմ:

— Ո՞ւր, աղջի:

Դա տեղը չի հայտնում:

— Մի տեղ, ասում ե:

— Վորտե՞ղ, ի՞նչ տեղ:

Չի ասում:

Լաց, աղաչանք:

— Խեղճ մորդ խնայիր, ասում եմ,—բա վոր ինձ ել բան չասես, ո՞ւմ պըտի ասես...:

Շատ վոր խնդրվեցի:

— Դե, լավ, ասում ե կամաց,—մարդու

Սա. Զորյան. Դրադարանի աղջիկը—Յ

բան չասես. յես գնում եմ հորքուրի տուն՝
թաղնվելու:

Այսինքն տալիս տուն: Տալս ել ապրում ե
քաղաքի մի ծերում, հեռու, վակզալի կողմը:

— Մինչև յե՞րբ, աղջի:

Թե՛ «Տեսնենք»:

Խոսում ե ու հետն ել, թղթեր նամակներ,
գրքեր հավաքում:

Հավաքեց, հավաքեց, կապոց արավ, բա-
րակ պալտոն վերցրեց ու գնաց: Ել սիրտ չարի
բան ասեմ: Ռանգն ենպե՛ս եր քցել, վո՛նց վոր
պատի ծեփ: Եղպես ժամանակ ե՛լ ո՞վ կարա
բան ասի. մեր չե, թեկուզ ոտար ըլի: Ուզեցի
տանեմ մինչև տալիս տուն, ճամփու քցեմ—
չթողեց:

— Հարկավոր չի, մայրիկ ջան, ասում ե,—
դու տանից սկի դուրս մի գալ: քեզ վոր ինձ
հետ տեսնեն—լավ չի:

Ու գնաց: Բայց սիրտս չհամբերեց: Դուրս
եկա դրա յետևից ու գնացի մինչև հայաթի
դուռը:

Դիչերը մո՛ւթ-մութն ե. սիրտս ել դի-
չերվա պես: Մին բարկանում եմ դրա վրա, ու-
զում եմ յետևից անիծեմ, մին ել խղճում եմ
խեղճ աղջկան:

«Տեր աստված, ասում եմ,—դու խնայես
իմ կորած, մոլորած զավակին...»:

Եսպե՛ս... Վիկտորի գնալուց հետո մի՞
ժամ եր անցել, յերկո՞ւ, հի՞նդ— չեմ իմա-
նում. Միխակը, կնիկը վերև քնել եյին ար-
դեն, յես ել տեղս մտած կուչ եմ յեկել՝ աչքս
անխուփ, սիրտս անհանգիստ, մին ել ը՛հը,—
վտաների ձեն: Սանդուղով իջան իմ բալկոնը
ու դուռս ծեծեցին: Մին մտածեցի թե, շատ
կարելի յե, Վիկտորն ե, փոշմանել ե կամ խ-
մացել ե բան չկա, ընկերների հետ յետ ե եկել:
Բայց տեսնում եմ— չե՛: Դուռը ենպես են ծե-
ծում, վոր սկի Վիկտորիս ծեծելուն նման չի:
Նա վոր ծեծում եր՝ միշտ մատի ծերով եր ծե-
ծում— մի, յերկու անգամ, հետո ել՝ «մայ-
րիկ»: Ե՛, յես ել ենքան խոր քնող չեմ, լսում
եյի իսկույն: Իսկ ես անգամ վոչ թե մատով
ծեծեցին— վոտով, սապոզով «թրը՛խկ-թր-
ը՛խկ...»: Սիրտս ահ ընկավ: Ո՞վ պտի ըլի,
մտածում եմ, եսպես ուչ, գիչերվա կեսին:

— Ո՞վ ե, հարցնում եմ:

— Բաց արա, ասում են:

Տղամարդու անծանոթ ձեն ե:

Վեր կացա, շորերս հագա ու գնացի դեպի
դուռը:

— Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, ասում եմ:

— Մենք ենք, միլիցիան, բաց արա:

Լսում եմ խոսողը մինը չի. շատվոր են:

դրան յետևը դավուում են: Սիրտս ասելի ահ
ընկալ:

Մին մտածեցի թե՛ վիկտորի համար են
յեկել, մին ել թե՛ ուլ ե իմանում, դող մարդիկ
են դուցե, թալանի յեն եկել: Եդ որերին ել եդ-
պես բաներ շատ եյին ըլում. եդպես խաբելով՝
չատ տներ եյին կտրում: Մարդիկ կային՝ հենց
դրանով եյին պարապած: Քանի՛-քանի՛ մարդ
թալանեցին վախճալի ճամփին, քանիսին քաղա-
քում:

— Ի՞նչ եք ուզում, ասում եմ.—տանը մարդ
չկա:

— Բաց արա, կիմանաս ի՞նչ ենք ուզում:

Յես կողքիս եմ ընկել, թե ես կես գիշերին
չեմ կարող դուռը բաց անել:

— Չեմ կարա, ասում եմ—մենակ, անտեր
կնիկ եմ, ի՞նչ եք ուզում ինձանից:

Իսկ նրանք գոռում են.

— Հերի՛ք ե, բաց արա, թե չե՛ կը ջար-
դենք:

Եդ ժամանակ լսեցի, թե ինչպես խալիս
Միխայիլը զարթնեց վերև—հազաց ու սկսեց ման
գալ: Եդ ինձ սիրտ տվեց: Նա զարթուն ե, մտա-
ծում եմ, յեթե յեկողները դող ըլեն, ձենս կի-
մանա: Ու դուռը բաց արի:

Ներս թափվեցին հինգ-վեց մարդ՝ թվան-
քով, բանով:

— Վիկտոր Դանեւյանցն ո՞վ ե:

— Իմ աղջիկն ե, ասում եմ, բայց ետեղ
չի:

— Ո՞ւր ե հապա:

— Չգիտեմ, ասում եմ, իրիկունը գնացել
է, դեռ տուն չի եկել:

— Ո՞ւր ե գնացել:

— Չգիտեմ:

— Վո՞նց չգիտես, ասում ե դրանց մեծը՝
տչքերը վրես չուելով.— քու աղջիկն ե, պար-
տավոր ես իմանալ ո՞ւր ե գնում: Ո՞ւր ե, ա-
սա՛:

Կպել են, թե աղջկանդ տեղն ասա, թե չե
քանը վատ կըլի: Յես ել՝ «Չգիտեմ, ասում եմ,
ի՞նչ իմանամ ո՞ւր ե գնացել»: Նրանք թե՛ «Շատ
լավ գիտես, բայց չես ասում»: Յերդվում ե՛—
յերիկինք, դետինք, «առեք-կերեքը» վկա, չգի-
տեմ:—Չեն հավատում:

— Անկարելի բան ե, ասում են, դու քու
աղջկա տեղը չիմանաս:

— Այ քեզ բան, ասում եմ:—Չգիտեմ:

Ասում եմ, բայց սիրտս դողում ե: Մենակ
կնիկ՝ հինգ-վեց հոգու առաջ կանգնած. ինձ
կորցրել եմ:

Եդ ժամանակ տեսնեմ—Միխայիլը՝ պալտոն
չապկի վրա հազած, անդուլպա, չուստերով
մտավ ներս:

— Ի՞նչ կա, —հարցրեց միլիցիային:

Նրանք թե՛

— Վիկտորիա Դանեւյանցին ենք ուզում:

Վոր Միխակը երևաց, սիրտս մի քիչ պընդեց: Ասի՛ սրանից կը քաշվեն, կամաչեն—կը հեռանան: Բայց—չե՛: Տեսան աղջկանս տեղը չեմ ասում, սկսեցին տունս խուզարկել: Ե՛լ ծակ ու ծուկ չթողին՝ մայն եկան. ե՛լ սնդուկ, քսուր՝ ճրուր չթողին՝ քրքրեցին: Մինչև անգամ մեկ-մեկ կուռցան տախտերի տակը նայեցին: Մի խոսքով՝ տունս աղեցին—մաղացին— աղջիկ չգտան: Վերջը տեսան բան չկա— Վիկտորի գրյանքը հավաքեցին, տարան: Գրեցին մի թղթի վրա, թե. տանում ենք տասնուհինգ հատ գիրք: Թուղթն ել ստորագրել տվին Միխակին ու տվին ինձ:

— Տեսա՛ր, Աննա, ասավ Միխակը նրանց գնալուց հետո:—Տեսա՛ր. վոր ասում եյի աղջկանդ ջիւավը քաշի՛ ետորվա համար եյի ասում:

— Դրուստ ես ասում, խալիա, շատ դրուստ ես ասում, —ասում եմ:—Բա հիմի վո՞նց անենք, վոր երեսիս չբռնեն. աղջիկ ե, սիրտը բարակ, սրտածաք կըլնի:

— Ել հիմի ուչ ե, ասում ե. —Ետորվա ճառից հետո նրան չենք կարող ոգնել:

Ասավ ու գնաց:

Մինչև առավոտ թե՛ դուք իմ տանը աչք եք կպցրե՛լ—յես ել ենպես: Քանդած բաները սկսեցի տեղավորել ու, մինչև լուս տունս դորով կարգի բերի: Առավոտը հարևաններս թափվեցին գլխիս: Իմացել եյին դիչերը տունս միլի-

ցիա յե եկել, իրար յետևից դալիս եյին հարց ու փորձի—«Ի՞նչ արին, ինչ չարին...»: Դրանց հետ յեկավ մի ծանոթ կնիկ, վոր ապրում եր հարևանի հայաթում: Դա մի-կարծ, կասույտ աչքերով կնիկ եր—անունը Յուզարբեր: Նստում եր միշտ իրենց դարպասի դրան—գուլպա եր անում կամ սեմուչկա չրթում: Քաղաքում չուիը չուիով դիպչեր՝ կիմանար: Մեկ-մեկ ել դայիս եր ինձ հետ զրից անում: Դա, վոր իմացավ տունս խուզարկել են, Վիկտորին ման են գալի,—չատ ցավեց.—«Վո՛յ քոռանամ յես...»: Հետո ել պատմեց, վոր քաղաքում մարդիկ են բռնում: Բայլ շեխուկություն սարքողներին:

— Վիկտորիդ, ասում ե, լավ պահիր, թե չե կը բռնեն. աղջիկ ե, ամոթ ե բանտ տանեն: Յեթե, ասում ե, լավ տեղ չի, յես տեղ ունեմ՝ պահենք... —

Ենպես մի լեզու բանացրեց, վոր ասի՛ սրանից սրտացավ մարդ չկա:

— Չե, ասում եմ, շնորհակալ եմ: Վիկտորը լավ տեղ ե:

— Վորտե՞ղ ե, ասում ե, ապահո՞վ տեղ ե: Յես ել, վա՛յ ինձ, միամիտ—կնիկ:

— Վոչինչ, ասում եմ, իրա հորքուրի մոտ: Լավ տեղ ե: Վակդալի կողմը:

— Հա՛, ասավ դա ու պոռչներին հուպ տըրվեց մի ուրիշ տեսակ:

Դա վոր պոռչներին հուպ տվեց, յես ասածս փոչմանեցի, թե՛ ինչո՞ւ ասի ախր, մտածում

եմ.—Սա ել կերթա հանկարծ ուրիշի ականջը
կըքցի: Բայց ել ի՛նչ կարող եյի անել: Ասած
խոսքն ու ծնված երեխեն մեկ են—պիտի ճվան:
Եղպես ել եղալ:

Երկու որ հետո Վիկտորին բռնեցին հոր-
քուրի տանը, բռնեցին իրա թղթերը հետը:
Գլխիս վա՛յ տվի ու մտածում եմ, թե վո՛նց ի-
մացան տեղը, վոնց չիմացան: Մտածում եմ ու
գնում եզ կնկա մոտը:

— Աղջկանս բռնել են, ասում եմ,—քեզա-
նից սավայի մարդ չգիտեր նրա տեղը. չըլի՞, ասում եմ, բերանիցդ խոսք ես թուցրել:

Նա թե՛

«Չե՛, ասում ե, մարդու բան չեմ ասել...»

Բայց տեսնում եմ կարմրում ե ու աչքերը
փախցնում ինձանից: Հետո իմացա, վոր դրա
ախպերը քագուն միլիցիա յե. դրան զրկել են
ինձանից բան դուրս քաշելու: Իմացել ե ու...
Վա՛յ տվի գլխիս, ինքս ինձ նախատեցի, վոր
պատճառ յեղա իմ աղջկա բռնելուն: Բայց ել
ի՛նչ կարող եյի անել: Բանը բանից անցել եր:
Հիմի մնում եր մի բան—մտածեցի, թե վո՛նց
անեմ, վոր նրան ազատեն:

Գնացի, ամենից առաջ, բանտը, տեսնեմ
ի՞նչպես ե, ի՞նչ են արել: Ասում եյին, վոր
բռնածներին ծեծում են: «Աղջիկ ե, ասում եմ,
վախից սիրտը կը պատռի, դնամ մի տեսնեմ»:
Բանտումն ասին, թե Վիկտորիա Դանեւյանցը
եստեղ չի. շատ կարելի յե մյուս բռնավորների

հետ հին դպրոցումն ե: Քանի վոր բանտը լիքն
եր բռնավորներով, նոր բռնածներին տարել
եյին դպրոցը: Գնացի դպրոց:

— Վիկտորիա Դանեւյանցն եստե՞ղ ե:

— Եստեղ ե:

— Կարելի՞ յե տեսնել:

— Չի՛ կարելի:

— Յես նրա մերն եմ, ասում եմ:

— Միենույն ե. թեկուզ աստված ըլես.—չի
կարելի: Պետք ե եսինչից թուղթ բերես, վոր
թողնենք:

Գնացի եղ ինչի մոտ: Խնդրեցի, աղաչեցի—
մի թուղթ տվեց, թե՛ Աննա Դանեւյանցին թույլ
տվեք իր աղջիկ Վիկտորիա Դանեւյանցին տես-
նի: Թուղթը կարգացին՝ թողին: Տարան կա-
րիդորը, հետո Վիկտորին կանչեցին: Եկավ
դա՛ պալտոն ուսերին քցած, կտրած մազերը
թափ տալով. կարծես հե՛ջ— իրան չեն բռնել,
ինձ են բռնել: Եկավ՝ դարձաւը հետը: Հեռ-
վից ինձ տեսավ թե չե. «Մայրիկ, դո՛ւ ես»,
ասում ե: Ենպես ե խոսում, կարծես իրենց
տանն ե: Ուղեցի դրան մի լավ շչպրեմ,— դա-
րձաւից քաշվեցի, բայց ելի չկարողացա ինձ
պահեմ.

— Աղջի, ասում եմ,—բա ես բան ե՞ր քու
արածը:

— Մայրիկ, ասում ե, ավել պակաս մի խոսի. ինչ վոր ասելու ես, ասա՛ առանց ավելբորդ խոսքերի:

Ինպես ել հանգիստ ե խոսում վոր—պատում եմ: Ասա՛ սկի վեջն ե քցում, թե բռնված եմ, վատ բան եմ արել, թե աղջիկ եմ, խայտառակվել եմ քաղաքում: Ամենևին:

— Բա հիմի ի՞նչ անեմ, աղջի, վոր քեզ ազատեն: Ո՞ւմ խնդրեմ:

— Վոչ մի մարդու, ասում ե.

«Գժվել ե ես աղջիկը, մտածում եմ, — խելքը յե՞տ ե տվել, ի՞նչ ե»:

— Գնամ, ասում եմ, Միխակին խնդրեմ՝ թո՛ղ մի բան անի:

— Չե, ասում ե, վոչ մի Միխակ: Ավելի լավ ե յես եստեղ մնամ տասը տարի, քան թե նրա բանով ազատվեմ:

— Ինչի՞, աղջի. Միխակը քեզ ի՞նչ ե արել:

Թե՛ Միխակը մեր թշնամին ե: Եսպե՛ս, ենպե՛ս: Տակից—գլխից խոսում ե, դարաուլն ել լսում ե: Աչքով—ունեքով եմ անում, թե՛ աղչի, կապդ քաչի: Հե՛ջ: Թե նրան ասած, թե ես պատին: Վերջը՝

— Միևնույն ե, ասում եմ, քեզ հո չեմ թողնի ևստեղ մնաս. ուրիշ ծանոթ մարդ չունեմ եղ զործերի մեջ—Միխակն ե. պետք ե նրան խընդըրվեմ:

— Չե, ասում ե, յեթե նրա խոսքով ինձ ազատեն, յես ելի բանտը կըզամ...

Շատ ել չեր ուզում, բայց յես բանտից գուրս յեկա թե չե՛ գնացի Միխակի մոտ: Եսպես—եսպե՛ս:

— Վերև աստված, ներքև դու, խալիա. մի բան արա, աղջկանս ազատի՛ր:

Նա թե՛

— Դա իմ բանը չի. գնա կամիսարի մոտ: Հասկացա, վոր գլխիցը հեռացրեց: Բայց յես կամիսարի մոտ չգնացի—ծանոթ չեր: Առաջ հլա մի գնամ, ասի, ենպես մարդկանց մոտ, վոր եղ գործերի, կոմիտեքի մեջ են, կամիսարին ծանոթ են, աղջկանս ել գիտեն: Միխակից յեղը գնացի Վիկտորի վարժապետի մոտ: Են, վոր մեկ—մեկ գրադարանում հետը վիճում եր: Նա ել թե՛

— Չեմ կարող, դա կամիսարի գործն ե:

Մեկ ել թե՛

— Քու աղջիկը ենպես բան ե արել, ասում ե, վոր չեմ կարող միջնորդել:

— Ինչ անենք, ասում եմ, ջահելու թին ե: չի հասկացել:

— Չե՛, ասում ե, շատ լավ հասկանում ե: Քու աղջիկը ազգի դավաճան ե, ասում ե: Ուզում ե՛ ոուս բայլեպիկներին բերեն՝ մեր յերկիրը քանդեն:

Տեսա դրանից ել խեր չկա, գնացի տերտերի կուշտը: Մեր թաղի կնանիք խորհուրդ տվին, թե՛ գնա տեր—Բարսեղի մոտ: Նա ել եղ գործերի, կոմիտեքի մեջ եր մի ժամանակ:

Ինքն ել մեր ծխատերն եր: Գնացի: Դա ել են պատասխանը տվեց, ինչ վոր վարժապետը, թե՛ տղջիկդ աղբի դավաճան է, յես բան չեմ կարասնի:

— Տերտե՛ր, կարգիդ ղուրբան, տերտե՛ր, կռանամ՝ վոտդ կհամբուրեմ, կըբարձրանամ, ձեռդ, մի բան արա՛... .

Դա ձեռները կապալի ջերերը դրած՝ գնում գալիս է բալիսնում, յես նրա յետևից: Յես խնդրում, աղաչում եմ—նա՛ չե՛ վոր չե... .

— Գնա՛, ասում է, կամխարի մոտ. թե կազաի, թո՛ղ աղատի... .

Փոր ու վոչման գնացի եղտեղից կամխարի մոտ: Մի քանի ոթախ անցա, նոր մտա են մեծ ոթախը, ուր, տեսնեմ, կնիկ, մարդ հավաքված, աթոռներին նստած՝ սպասում են: Յես ել նստեցի մինչև իմ հերթը գա: Նստեցի ու ականջս կախ՝ լսում եմ ի՛նչ են խոսում: Եղտեղ, նստածների մեջ կային ենպեսները, վորի կամ տղեն եր բռնված, կամ աղջիկն, կամ մորդը: Պատմում էյին, վոր քաղաքում հիսուն—վաթսուն բալչևիկ են բռնել: Վորին ել վոր չեն կարացել բռնի—նրա հորը, ախպորը կամ կնիկանն են բռնել: Նրանց տներն ել խուզարկել են իմ տան պես: Ինչո՞ւ: Թե մայիսի տոնի որը նրանք իրանց վատ են պահել— հայհոյել են կռավորության մարդկանց, չեն հավանել նրանց ու նրանց գործերը: Եսպես բանե՛ր... .

Նստել եմ եղտեղ մենակ ու մտածում եմ: Մին ել՝ մի սև շորեր հագած կնիկ մոտենում ե ինձ.

— Դո՞ւ յես Վիկտոր Դանելյանցի մերը, ասում է:

— Յես եմ: Ի՞նչ կա:

Նայում եմ դրան—տեսնեմ լաց եղած է. աչքերը թաց են:

— Բա բսենց ողբաթ կլինե՞ր, ասում է, վոր քու աղջիկը բերեց իմ գլուխը:

Ու լաց է ըլում: Արցունքներն ել աչքերից թափվում են: Յես բան չհասկացա:

— Ի՞նչ ողբաթ, ասում եմ:

— Աղջիկդ, ասում է, ենքան արգելված գիրք տվեց՝ Աշխենիս գլխահան արավ: Հիմի բռնել են ու, ո՞վ է պատասխանատուր:

Ասում է ու լաց ըլում: Ձեռի աղլուխով աչքերը սրբում է ու լաց ըլում:

— Եդ մի աղջիկն ունեմ, ասում է, —եդ ել եղպես:

— Այ քուր ջան, ասում եմ, յես ի՞նչ անեմ: Յես կուզեյի՞ վոր եղպես ըլեր:

Նա թե՛

— Ձե՛. քու աղջիկն է մեղավոր: Իմ անմեղ երեխին գլխահան արավ, ասում է.—ենքան գիրք տվեց, ժողով կանչեց, վոր խաթի մեջ քցեց... .

Բարձր խոսում է ու լաց ըլում ելի:

Շատ վոր խոսեց, վեր կալա թե՛

— Յես ի՞նչ անեմ. թող աղջիկդ, ասում էս, յեթե խելք ուներ, չխարվեր, թող տված գերբը չվերցներ:

Եդ ժամանակ մի ուրիշ կնիկ են կողմից.

— Քու աղջիկն, ասում ե, շատ ե մեղա՝ վոր: Վրոնց չվերցնեյին. նա ոճը ծակից կը հաներ, ենսպե՛ս լեզու ուներ: Բոլորն ել խարվում եյին: Գրադարանը բուն եր շինել, ու սրան նրան թարակ եր քցում: Իմ տղեն ել նրա յերեմից բռնվեց. քու աղջկա յերեսից...

Դրանից հետո մոտեցավ մի կնիկ ել, հետո մի ուրիշը: Չորս հինգ հոգով կանգնել են առաջիս ու բռունցքները թափ են տալի վրես.

— Եդ ի՞նչ մեր ես դու:

— Եդ ի՞նչ աղջիկ ես խրատել:

— Եդ ի՞նչ տեսիլք աղջիկ ե:

— Հողեմ գլուխը. ցխեմ գլուխը:

— Նրան կախելն ել քիչ ե: Մեր երեխանցը գլխահան արավ:

Կանգնել են առաջիս, խոսում են, ձեռ են թափ տալի, հեկեկում են, լաց ըլում: Յես ել առաջներին չորացել եմ, փետ դառել: Թողում չեն մի խոսք ասեմ: Իրանց սրտի կատաղու թյունը թափում են գլխիս ու թուք ու մուր տալի:

— Մենք հիմի, ասում ե, կամխարին ել պըտի ասենք, վոր քու աղջիկն ե մեղավոր, վոր մեր երեխանցը նա՛ ե ճամբից հանել:

Եդ ել վոր ասին՝ չհամբերեցի:

— Խի՞, ասում եմ, ձեր երեխանց գլխին խելք չկա՞: Ծա՞չ են, վոր նրան լսեցին, ճամբից դուրս եկան:

— Քու անզգամ աղջիկը գրավեց, ասում են: Գրավեց իրա լեզվով:

Դրանք եդպես խոսում են կատաղած՝ յես ինձ ուտում եմ. «Վիկտոր աղջիկ, մտածում եմ, մի ձեռս ընկնես ես բոպեյին, տե՛ս քեզ ի՞նչ եմ անում»:

Վերջը. դրանք վոր շատ դալմադալ արին, մի ծառայող տղա մոտեցավ թե՛

— Ձեններդ կտրեցեք: Աղմուկ չըլնի:

Դրանք նոր սուս կացան:

Հերթով գնացին կամխարի մոտ. գնացին՝ դուրս եկան, գնացին՝ դուրս եկան: Իմ հերթն ել վոր եկավ, մի տղա մոտեցավ թե՛

— Դու, մայրիկ, դուր մի գնա: Քու խնդրը կամխարը չի լսի, միեւնույն ե:

— Ինչի՞, ասում եմ:

— Նրա համար վոր, ասում ե, քու աղջիկը հայտնի յե: Են որվա ճառը նրա տունը քանդեց: Մոտը թղթեր են գտել. նա ել չի կարող արդարանալ:

Ինչ կըլնի-կըլնի, մտածեցի, պետք ե գնամ իմանամ պատճառն ի՞նչ ե: Կըխնդրվեմ, վոր ջահելություն ե արել, թող ների. կըխոսասանամ, վոր ել եդպես բան չի անի. գուցե սիրաբ գութ գցեմ—երեսիս ազատեմ: Մտածեցի ու գնացի ներս մտա: Սեղանի մոտ նստած եր մի

Ջահել տղա՝ բեխերը վոլորած, մաղերը թողած: Առաջին թանաքամաններ, թղթեր... Դա ինքը կամխարն եր. դրա կողքին ել նստած ե տերտերի աղվակատ տղեն—Վաղարշակը, են որվա ճառ խոսողը, ելի իրա կրթամալով, բանով, ակնոցը աչքերին: Մոտեցա դրանց ու գլուխ ավի: Յերկուսն ել վտտից գլուխ նայեցին ինձ:

— Ի՞նչ կա, ասում ե կամխարը:

— Եկե՛լ եմ, պարոն կամխար, աղջկանս համար:

— Ի՞նչ աղջիկ, ո՞վ ե քու աղջիկը:

— Երեկ բռնեցին, ասում եմ.—Տղիս կամա՛վոր գրեցին՝ կու՛վում մեռավ, եղ մի աղջիկն ե մնացել, դրան ել բռնեցիք, յես ի՞նչ անեմ:

— Ո՞վ ե քու աղջիկը, հարցնում ե.—Աղ-գանու՛նն ասա՛:

— Գրադարանի աղջիկն ե, ասում եմ,—Վիկտոր Դանելյանցը:

Դա տերտերի տղա աղվակատին նայեց, «հը՛ւ» արավ ու քթի տակ ծիծաղեց:

— Նա քու աղջի՞կն ե, ասում ե:—Հի՛մի ի՞նչ ես ուզում վոր,—հարցրեց փոխված ձայնով:

— Կը խնդրե՛յի, վոր աղատեք: Աղջիկ ե, ասում եմ, մի բան կը պատահի: Յես եմ ու եղ աղջի՛կը: Ջահել ե, սխալվել ե...

— Հը՛մ, ինչպես չե. սխալե՛լ ե...

Ասում ե ու աղվակատին նայում:

Աղվակատն ել բեխի տակ ծիծաղում ե իրան-իրան:

Դա վոր շատ ծիծաղեց՝ ինձ չկարացի պահեմ:

— Դու խի՞ ես ծիծաղում, ասում եմ:—Միխակի հետ վորդուս կամավոր գրեցիք—մեռավ, հի՛մի ել սրան եք ուզում մեռցնե՞ք:

Աղվակաղը ունդը քցեց, տաքացավ.

— Մեկը մյուսի հետ կապ չունի, ասում ե ակնոցը քթին տմբամբացնելով:

— Վո՞նց չունի, ասում եմ,—չե՞ վոր յերկուսն ել իմ երեխեքն են, երկուսին ել յես եմ բերել-մեծացրել:

— Դա նշանակություն չունի, ասում ե ելի ակնոցը տմբամբացնելով.—Վոչ մի կապ չկա նրա համար, վորովհետե մեկը՝ տղեդ հայրենիքը սիրում եր, զնաց նրա համար կովելու, մյուսը, ասում ե, աղջիկդ միացել ե մեր հայրենիքի, Հայաստանի դավաճաններին:

Խոսեց եսպես զրափառ ու վեր կացավ:

Յես բարկացա.

— Իմ վորդին, ասում եմ, առաջինը՝ իրա կամքով չդնաց, դուք դռու՛վ գրեցիք, զրկեցիք: Խոստացաք ինձ ոգնել—վոչ մի կուպեկ ել չը տվիք: Սա ել, ասում եմ, ի՞նչ դավաճան. Չահե-լություն արավ՝ մի ճառ ասավ, դրն համար պետք ե բռնե՞ք:

— Ի՞նչ ճառ, ասում ե,—մեծակ ճառը չի:

Քու աղջիկը բալչեիկներին հետ կապ ունի։ Նրանցից դադտնի փող ու թղթեր և ստացել, վոր մեր տերությանը վնասի։

— Վա՛յ քուանամ յես, ասում եմ, — եղպես բան չկա։ Յես նրա ձեռին փող չեմ տեսել իրա ոռճիկից սավայի։ Են ել ստացել՝ միշտ տվել և ինձ։ Իմ աղջիկն անմեղ և, ասում եմ, նրա վրա չառ են քցում։

Կամխարն ենտեղից.

— Ի՞նչ չառ. բոլորն ել քու աղջկանն են մեղադրում, վոր իրենց ջահելներին գլխահան և արել։ Քու աղջիկը, ասում և, վոչ թե անմեղ և. քու աղջիկը... լիրբ և։

Լի՛րբ... Վոնց վոր քարով գլխիս խիեն։ Շչմեցի։ Աչքերս չաղվեցին. գլուխս քիչ մնաց պտուռ դա։ Լի՛րբ... Իմ խեղճ աղջկան եզ եր պակա՛ս։ Առանց յերկար մտածելու, թե վո՛ր տեղ եմ, ո՛ւմ հետ եմ խոսում, — տարա ու բերի։

— Լիրբը դուք եք, ասում եմ. — ինչպես եք համարձակվում իմ անմեղ աղջկանը լիրբ ասել։

Յես վոր ձենս բարձրացրի — կամխարը դանդը տվեց։

Ներս մտավ մի գյադա։

— Դո՛ւրս տարեք սրան, ասում և, եստեղից. դո՛ւրս տարեք անդգամ ին... .

Եղ որվանից հույսս կտրեցի ամեն կողմից. մնաց միայն աստված։ Դրա վրա ել, վորդուս

սպանվելուց հետո հավատ չունեյի. բայց ելի հույս եր։ Վորդուս չվողորմաց, մտածում եմ, իցե թե աղջկանս վողորմա։ Ամեն որ բանտ եյի գնում, կերակուր եյի տանում, մեկ-մեկ ել Վիկտորիս համար փոխնորդ։ Ձեռս ու վոտս ել բան չեր բռնում. գործից ել զրկվեցի, գործատեղից ել։ Ո՛վ սիրտ ուներ դնա սրա-նրա լվացքը անի։ Ո՛ւր ել դնում եյի — հենց մի գլուխ են եյին ասում, թե ի՞նչ աղջիկ ևս մեծացրել, վոր եղպես աղբի խայտառակիչ դուրս եկավ։ Թա-դուն փողեր և ստացել, վոր Հայաստանը քանդեի. ել ինչե՛ր, ինչե՛ր... Շատ քիչ մադ կար, վոր ցավում եր ինձ։ Բայց նա ել, ո՛վ ցավում եր — չեր կարում սիտը բաց խոսի։ Կային են-պեսներն ել, վոր ինձ հետ չեյին ուզում խոսել, թե եղպես աղջկա մեր և... .

Քանի վոր գործ չեյի անում՝ ձեռիս փողը կամաց կամաց հատնում եր։ Մի որ ել հիշեցի, վոր Վիկտորը գրադարանի ուճիկը չի ստացել։ Ասի դնամ ստանամ. իրա համար դոնե ճաշի փող կըլնի, վոր մի քիչ կարգին հաց, բան տանեմ բանտ։ Մարդամեջ եմ տանում, մտածում եմ, ամոթ և։ Տանը Վիկտորը ցամաք հացով յոլա եր գնում — բանտում ի՛նչ աներ։ Մտածեցի ու գնացի։

— Նա բան չունի ստանալու, ասում և կառավարիչը։

— Ձե վոր, ասում եմ, անցած ամսի ոռ-ճիկը չի ստացել։

— Միևնույն է, ասում է, կարգադրված է
չաա՛լ...

Չտվին: Ելի սկսեցի թեթև բաներ տանել.
մի որ կարտուլ, մի որ աղցան, լոբի, մի քանի
անգամ է լիատլետ տարա: Ինչ վոր տանում ե-
յի, մեղքս ի՛նչ թագցնեմ, կարծում եյի Վիկ-
տորի ձեռքը չի հասնում, հենց իրանք բատի
մարդիկ են ուտում: Քանի վոր աչքս չեր տես-
նում—եղպես եյի մտածում: Բայց հետո իմա-
ցա, վոր ինչ վոր տարել եմ, տվել են իրան:

Մի որ ել եղպես վնացի բանտ, տեսնեմ
հրես մեծ բազմություն է հավաքվել բանտի ա-
ռաջ: Հավաքվել նայում են ներս, նայում են
բանտի պատերին, իսկ եղտեղ փողոցում թափ-
ված են ամեն տեսակ բաներ—հաց, պանիր,
կոտրած չաշկաներ, ամաններ, մսի կտորտա՛ք:
Մի քանի գաղթական կնիկ հավաքում են թափ-
ված բաները, գողները լցնում, մնացած մարդիկ
քամաջ են անում: Ու բանտի դարասուլները ինչ-
քան ասում են դրանց՝ «գնացե՛ք, հեռացե՛ք»—
ժաժ չեն դալի: Բանտի մեջ ել ինչ—վոր զայմա-
ղալ կա: Դե՛ս նայեցի, դեն նայեցի՝ բան չհաս-
կացա: Նոր հարցնում եմ.

— Ես ի՞նչ բան է, ասում եմ, ես բաներն
ո՞վ է թափել:

— Բռնավոր բալչեիկները, ասում են:

— Ինչո՞ւ են թափել:

Մինը թե՛

— Գժվել են, դրա համար:

Մի ուրիշն ել թե՛

— Եսոր մեկին ծեծել են բանտում, դրա
համար բերած ուտելիքը թափել են փողոց:
Ձեն ուզում ուտել:

Ա՛յ թե ի՛նչ... Միրտս թուլացավ հան-
կարծ: Քիչ մնաց շունչս կտրի: Մոտեցա եղ խո-
տողներից մեկին, մի շլապավոր մարդու:

— Դու կիմանաս, ասում եմ, պարոն.—Ո՞ւմ
են ծեծել. բռնավորներից վորի՞ն:

Հարցնում եմ, բայց սիրտս դողում է:

Շլապավորը թե՛

— Մի տղի:

— Իսկ յես կարծում եյի, ասում եմ, Վիկ-
տորիս...

Եդ մարդը թե՛

— Աղջիկ ունես բռնվա՞ծ:

— Հա, ասում եմ, նրան ել բռնել են բալ-
չեիկության համար. բայց անմեղ է ասածու
գառի պես:

— Ի՞նչ է աղջկադ անունը, հարցնում է:

— Վիկտոր Դանեկյանց, ասում եմ.—Գրա-
դարանի աղջիկը:

Եդ մարդը յերեսը շուռ տվեց հանկարծ:

— Նա՞ է անմեղ, ասում է.—Վոր անմեղը
նա է, բա մեղավորն ո՞վ է: Նրան ծեծը, ասում
է, քիչ է:

Եստեղ յես ել չհամբերեցի—մի վոտս յետ
դրի, մի՛նն առաջ:

— Դու ո՞վ ես, հողեմ գլուխդ, վոր եդ—

պէս դուրս ես տալիս քեզ ու քեզ...
 Վոր չսկսեցի՛ եսպես, եղ մարդը թողեց ու
 հայրա՛: Ինքն ել շլատով մարդ եր:

Քիչ յեղը, յերբ հանգստացա, ճաշն ուղեցի
 տանեմ ներս: Չընդունեցին:

— Ինչո՞ւ, ասում եմ զարաուլին, ինչո՞ւ
 չեք ընդունում:

— Կարգադրված ե՛ չընդունել:

— Պատճա՞ռը:

— Եղ քու իմանալու բանը չի, պառավ,
 ասում ե:

Եղ զարաուլների մեջ կար մի զարսեցի
 տգա՛մեծ՝մեծ աչքերով, ճակատը ճղված ու
 կարված: Ինձ հետ լավ եր. միշտ «մայրիկ» կա-
 սեր. խղճում եր. ինչ վոր ասեյի—կողմեր: Բայց
 եղ բոպեյին նա եղտեղ չեր:

Եղ ժամանակ յերբ խոսում եյի զա-
 րաուլի հետ, բռնավորներն սկսեցին յերգել:
 Ենպես են յերգում, վոր բանտը թնդում ե:
 Յերգում են բայլեիկների յերգը, են վոր
 ամեն տեղ յերգում են հիմի — «Անտիրնացո-
 լը»: Ու ամենից բարձր լսվում ե Վիկտորի
 ձենը՝ զի՛լ, զանգակի պես: Յերգում են բո-
 լոր սենյակներում, յերգում են ձեն-ձենի
 տված: Բանտի ծառայողները, զարաուլները
 անհանդիստ գնում են, զալիս, ուզում են
 մտնեն ներս, ուզում են արգելել յերգելը,
 բայց նրանք՝ հե՛չ: Վախից՝ սիրտս ջուր ե
 դասել: Ասում եմ՝ հրես բոլորին կըկտորեն,

կըստանեն... Բայց նրանք՝ սլի՛: Յերգո՛ւմ
 են, ու բոլորից բարձր Վիկտորը: Տեր աստ-
 ված, սա տանը չեր յերգում, մտածում եմ,—
 եստեղ սրան ի՞նչ ե պատահել... Մին ել, ա-
 սում եմ, գուցե նա չի՛, ուրիշ ե: Բայց չե՛.
 տեսնում եմ վոր նա ե: Վերջապես յես իմ
 աղջկա ձենը ճանաչում եմ: Յերգում են ևս-
 պես բոլոր սենյակներում, յերգում են իրար
 ուժ տված, ու ամենից բարձր ելի Վիկտորի
 ձենն ե դալի:

Մի քիչ վոր լսեցի, արտասուքս եկավ,
 ինձ չկարեցի պահեմ.

— Ձա՛ն, ջա՛ն, ասում եմ,—Վիկտոր ջան:
 Յես քու զանգակ ձենին մեռնեմ...

Բանտի զարաուլների մեծը բարկացավ.

— Դու ո՞վ ես վոր, ասում ե, եղպես խո-
 սում ես:

Ու կասկածով, զարմանքով նայում ե
 ինձ:

— Յես, ասում եմ, Վիկտոր Դանելյանցի
 մերն եմ: Են վոր յեգում ե՛ իմ աղջիկն ե:

Ասում եմ, վոր սիրտը գուժ քցեմ: Բայց
 նա, տեսնում եմ, չե՛— դրանից ավելի բար-
 կացավ.

— Դե՛, հեռացիր, ասում ե, թե չե...

Եղ ժամանակ իմ ծանոթ զարսեցի տղեն
 եկավ: Մոտեցավ ու կամաց.

— Մայրիկ, գնա՛, ասում ե անհարմար
 ժամանակ ե:

Մեծի բարկությունը տեսնելով գնացի:
Եդ դարսեցի տղեն ինձ ճամբու դրեց մինչև
գուռը:

— Եգուց բեր, ասում է, եսոր խառնված
որ է:

Իսկ յես դեռ չեմ հանգստանում.

— Վիկտորիս հո չե՞ն ծեծել, ասում եմ:

— Չե, ասում է, հանգիստ կաց. որիոր-
դին ծեծելու իրավունք չկա: Միայն թե հաց
չեն ուզում ուտել:

— Վ՞ոնց թե. սոված պլտի մնան, ասում
եմ:

— Ասում եմ ու մտածում— գժվե՞լ են
դրանք, ի՞նչ է. մարդ ել սոված հացը չուտի՞:

— Բա սոված պլտի մեռնե՞ն, հարցնում
եմ:

— Չեն մեռնի, ասում է, — հանգիստ
կաց:

— Թողեք, ասում եմ, — յես իմ աղջկանը
համոզեմ, վոր հաց ուտի. ջահել է, արածը
չի հասկանում:

— Չե, ասում է, — չես կարող համոզել.
միևնույն է, նա առանց ընկերների չի ուտի:

— Գուց ձեր հացը չեն ուզում, ասում
եմ, — իմ հացը տվեք, իմ հացը կուտեն:

— Չե, ասում է, միևնույն է. չեն ուտի:
Չենք ել կարող տալ, նրանք պետք է մեր հացը
ուտեն...

Ու բացատրեց ինձ, վոր նրանք վոչ թե

չեն ուզում հաց ուտել, այլ դրանով, ասում
է, բողոք՞ում են:

— Յես բան չհասկացա. ի՞նչպես թե հաց
չեն ուզում ուտել. սոված մնում են, թե բո-
ղոք՞ում ենք: Այ քեզ շաշե՛ր...

Բողոք՞ում ենք: Ո՞՞ք են գտել...

Տուն եկա. վո՛չ հաց է կուլ զնում, վո՛չ
ջուր: Երեխես ենտեղ սոված— յես հաց ու-
տե՛մ: Վոր մտածում եմ— գլխիս կրակ է
մաղվում: Ծունկս ծեծում եմ ու ինքս ինձ.
«կուրանամ յես, կուրանամ»... Ու եդ որը՝
գիշերը մինչև լույս, թե դուք իմ տանը քնել
եք, ենպես ել յես... Եդ որն ել Միխակի կնկա
Լիզինիի տոնն եր: Սազանդարներ: Հրավիր-
ված մարդիկ: Ուտում են, խմում, յերգում:
Տախտիս վրա կուչ եկած՝ լսում եմ նրանց
ձենը, թե վոնց են կենաց ասում: Ամեն կենա-
ցից հետո սաղանդարները ածում են ու յեր-
գում: Եսպես մինչև գիշերվա կեսը... Իսկ
գիշերվա կիսից հետո — աթոռները սեղաննե-
րը դրդռալով դես ու դեն քաշեցին ու սկսեցին
պարե՛լ: Վո՛նց են թխթխկացնում պոլը,
վո՛նց են պարում— քի չե մնում ոճրքը փուլ
դա... Լեկուրի՞ են պարում թե՞ լեգգինկա—
չեմ իմանում: Բայց ենպես են պարում, վոնց
վոր դիվահար... Պարեցին մինչև լուս. ու
լուսը բացվեց թե չե — դուրս եկան բալկոնը:
Հիմի ել ենտեղ են ածո՞ւմ ու պարո՞ւմ... Են-

պես վոր՝ դարդը մի կողմից, եղ զալմաղալը մի — չթողին աչքս կպչի:

Ասավորը բացվեց թե չե, նորից պատրաստութիւն տեսա Վիկտորին ճաշ տանելու: Ասի՝ երեկվա եփածս հնացած է. նոր ձու եփեցի, կաթ տաքացրի ու ստրա:

Ելի՝ չի կարելի: Ելի՝ բռնավորները, ասում ե, հաց չեն ուզում ուտել: Յես ել թե՛ թողեք, ասում եմ, ախպեր, իմ աղջկանը համոզեմ — ուտի:

Ձե վոր չե...

Յերեք սր եսպես հաց չընդունեցին: Բայց յերեք որն ել քանի գնում եյի, լսում էյի վո՛նց են յերգում դրանք: Յերգում են ձեն-ձենի սփած, յերգում են բոլոր սենյակներում, յերգում են ենպես, բանտը թնդում է կարծես: Ու յերգողների մեջ, ամենից զիւլ լսվում է ելի Վիկտորի ձենը, վոր գնգում է զանգակի պես...

Ինչ յերկարացնեմ — մի որ ել, յերբ հաց տարա բանտ, հայտնեցին թե՛ եզուց ել հաց, կերակուր չբերես:

— Ինչո՞ւ:

Թե՛ բռնավորներին տանում են Երևան:

— Ինչո՞ւ:

— Եղ քու իմանալու բանը չի, ասում է ծառայողը, են զարսեցի սողեն: — Միայն ես քանն իմացի, վոր ել չբերես... Ես ել վոր ասում եմ՝ մեծ բան է: Ուրիշներին, ասում է,

ես ել չեմ ասում: Խեղճ կնիկ ես, դրա համար:

Յես մատս կծեցի: Տեսա վոր ետեղ մի բան կա: Շատ եյի լսել, վոր բռնավորներին թագուն տանում են սպանում, հետո կերակուրը ընդունում ,մթամ թե՛ ետեղ ե... Եղ որ երբին ել մեկին՝ Մացո եյին ասում — եղպես տարա՛ն. նոր մի շաբաթ հետո իմացանք, վոր սպանել են: — Ուզում եր փախչի, դրա համար, ասում են:

Մի խոսքով՝ եղ վոր լսեցի՝ սիրտս ահ ընկավ: Բայց տեսա, վո ըեղ մարդը խղճում է ինձ: Ու հարցրի, թե յերբ են տանելու:

— Ել, ասում է, ավելի բան չեմ կարա ասի: Եսքանն ել վոր ասի, շնորհակալ եղի՛ր:

— Շնորհակալ եմ, ասում եմ, բայց, թե արեղ սիրես, ասա մի իմանամ:

— Ձե՛, ասում է, չե՛մ կարող: Ուզում ես ինձ պաշտոնից դուրս անե՞ն, սպանե՞ն:

— Վոչի՛նչ ել չեն անի, ասում եմ. — վերեւ աստված, ներքև՝ յես ու դու: Մեր խոսածը մարդ չի իմանա: Ասա՛-ի՞նչ ժամանակ են տանելու. ցերե՞կը, դիշե՞րը, սհաթի քանիսի՞ն...

Շատ վոր խնդրվեցի, աղաչեցի, խղճաց եղ զարսեցի սողեն (աստված յերկար կյանք տա նրան և աջողութիւն. ինչ գործ ել բռնի-բարին առաջի, չոր քարին ել վոր գնա-

կանանչի): Տեսա՛վ՝ արաասուքը աչքերիս լաց
եմ ըլում— խղճաց:

— Ե՛ս գիշեր, ասում ե, յսմը 12-ին:
Բայց իմացած յեղի՛ր, ասում ե, մարդու բան
չասես, թե չես վատ կըլնի...

— Խելառակվել չեմ, ասում եմ:— Դու
հանգիստ կաց:

Եդ որը, մինչև գիշերվա 10-ը, վոնց վոր
ինձ կրակը գնես-երվում եմ: Եկել եմ տուն
ու Վիկտորի համար պաշար եմ պատրաս-
տում: Ճամփա ե գնում, մտածում եմ, պետք
ե հետը մի բան դնել. դիտեմ, Վիկտորի բնա-
վորությունը ենպես ե, վոր շատ պաշար չի
սիրում, բայց, ասում եմ, վոչինչ, ընկերների
հետ կուտի: Գուցե ճամփին մի քանի ոք
մնաց, ո՞վ նրան հաց կտա... Ձու եմ եփում,
հալ եմ եփում. պանիր առա, լոշի մեջ դրի:
Եփեցի, հավաքեցի՛, դրանց հետ ել մի քանի
փոխնորդ, մի դերիա— կապոց արի ու դեռ
սհաթի ութը չեկած՝ գնացի վակգալ: Ասի՛
չուտ գնամ, ո՞վ ե իմանում, մտքերը փոխեն
գուցե ու շուտ տանեն: Տանը սպասելու փո-
խարեն, ալեկի լավ ե ենտեղ սպասեմ: Տանը
հո նստել չեմ կարում. թվում ե՝ Վիկտորին
տանում են, ել չեմ տեսնելու— սիրտս անհան-
գիստ ե ենպես, ա՛յ կրակվի իմ սիրտը: Հարա-
գատ աղջիկ են տանում, մտածում եմ, միակ
աղջիկ են տանում ոտար տղերանց հետ... Աղ-
ջիկ պահես— մեծացնես— են ել եսպե՞ս...

Վոր մտածում եմ— ուղեղս ժաժ ե ընկ-
նում: Մի շունչ ել չկա մոտս, վոր սիրտ տա,
մխիթարի— հանգստանամ մի քիչ: Ենպես եմ,
վոր սիրտս ուզում ե բերնովս դուզս գա:

Կապոցը ձեռիս ճամփա եմ ընկել ու գր-
նում եմ. վոտներս զորով եմ փոխում— ենպես
թույլ եմ: Մուլթն ե, ցեխ. ասող ել չկա յեր-
կընքում: Փայտոնները գնում են չիչփալով ու
ցեխը թավում վրես: Տանից մինչև վակգալ՝
աչխարքի տեղ ե. մինչև հասա՛ իմն ել ինձ
հասավ: Գնացի կապոցը ձեռիս նստեցի ծա-
ռերի տակ: Եղտեղ ել՝ շատ ճամբորդներ՝
կնանիք, մարդիկ իրանց կապոցների վրա նըս-
տել՝ պոեզի յեն սպասում. դրանց հետ ել ե-
րեխեք՝ մինը լաց ե ըլում, մինը քնել ե, մի
ուրիշը բլբլում ե մոր հետ: Եստ՝ղ-ենտեղ
ուրախ խոսում — ծիծաղում են: Սիրտս դա-
նակ խրես՝ արին չի կաթի: Նստել եմ մենակ
ու մտքիս յետևից ընկած՝ սպասում՝ եմ: Մին
ել մի տղամարդ մոտեցավ թե՛

Քույրիկ, ո՞ւր ես գնում:

— Տեղ չեմ գնում, ասում եմ.— Աղջկաս
տանում են, յեկել եմ ճամբու գնեմ:

Նա թե՛ ո՞ւր են տանում, ո՞վ ե տանում:

— Կառավարութիւնը ,ասում եմ:— Բռնել
ե ,տանում ե Երևան:

— Ի՞նչի համար ե բռնել:

— Բաղչեկիւթյան համար:

Եդ մարդը կանգնեց, «հ՛ըմ» արտալ ու՛ն՝

«բա կը թողնե՞ն, ասում ե, դու նրա հետ խոսե՞ս»:

— Խի՞ չեն թողնի, ասում եմ:— Նրա մերն եմ, հս ոտար չեմ. միակ աղջիկս ե՛ տանում են ու, ել ո՛վ սաղ մնա, ո՛վ ապրի— չե՞ն թողնի իրար երես տեսնենք, վերջին անգամ երկու խոսք ասենք իրար:

Եդ մարդը չվարած գլուխը թափ ամից ու գնաց: Դա գնաց մին ել, ըհը՛, զինվորները հավաքված խալխին քշում են. «Հեռո՛ւ, հեռո՛ւ»... Ի՞նչ ե: Տեսնեմ հրես բռնավորներ են բերում. չորս կողմից զինվորներ՝ հրացաններով, բանով:

Սիրաս կուչ եկավ. ծնկներս դողացին:— Ուրեմն՝ Վիկտորիա տանում են, Վիկտորս սրանց մեջ ե: Եշմածի պես եմ, յերազի մեջ: Ձինվորները խալխին հեռու յեն քշում, յես մոտենում եմ՝ տեսնեմ Վիկտորս դրանց մեջ ե, թե՞ չե: Մտիկ եմ անում, մտիկ եմ անում — բան չեմ տեսնում. զինվորներն ենպես են շրջապատել, վոր չեն երևում: Գիշերն էլ, վոնց վոր ասի՝ մութն ե. ասող չկա յերկրնքում. աչքերս ել, արցունքից քաղված, լավ չեն ջոկում. տեսնում եմ գլուխներ, ուսեր. բայց Վիկտորին չեմ ջոկում: Չըլի, ասում եմ, նրան թողել են. խղճացել են, վոր աղջիկ ե, աղերանց պես չի կարելի չարչարել, ու չեն բերել:

Դրանց տարան պոեզի կանգնելու տեղը:

Յես ել կապոցը ձեռիս, դրանց յետևից: Ուզում եյի մոտենամ, մին ել տեսնեմ՝ դրանք մութի մեջ, զինվորներով շրջապատված, եդ կես գիշերին սկսեցին իրենց յերգը — «Անտրի-նացոյը»:

Սկսեցին ու վո՛նց են յերգում, ամա՛ն, վո՛նց են յերգում...

Ոսոյսը հավաքվեց. դուրս թափվեցին մարդիկ զալերից, դուրս թափվեցին վակզայի տներից, բուսկաներից. հավաքվեցին ճաղերի մոտ, ծառերի տակ ու թամաչ են անում, թե ես ի՞նչ բան ե ես կես գիշերին... Դրանք սկսեցին թե չե — յես ելի Վիկտորիս ձենը ջոկեցի, վոր բոյորի ձենից բարձր երգիլ, դանդակի պես... Հենց վոր յերեխիս ձենը յսեցի՝ եյի չկարացի ինձ պահեմ, ինչպես են անգամ՝ բանտի հայաթում:

— Չա՛ն, ջա՛ն, Վիկտոր ջան, — ասում եմ, յես քու ձենին մատաղ...

Ու ուզում եմ մոտենալ, բայց ո՛վ կըթողնի:

Երկու վոտ փոխեցի թե չե, զինվորը՝ — Հեռո՛ւ, հեռո՛ւ. չի կարելի...

— Ա՛յ «չի կարելին» բնկնի փորդ, ասում եմ մտքումս ու հիմի ել ուզում եմ մեկել կողմից առաջ գնալ: Եստեղ ել մի ուրիշո: «Օե կարելի»: Ասում եմ՝ իմ աղջիկը դրանց մեջ ե, բան եմ տալիս:

— Չի՛ կարելի, չի՛ կարելի...

Ու ենպես մի բռնեց, վոր քիչ մնաց ընկնեցի մեջքիս վրա:

Իսկ նրանք՝ բռնավորները, յերգում են իրանց յերգը. յերգում են դժվածի պես, յերգում են ձեն-ձենի տված, յերգում են կարծես զինվորների ջգրու, յերգում են բարձր: Բոլորի մեջ ելի ջոկում եմ Վիկտորիս ձենը, բոլորի մեջ ելի նրա ձենն և եստեղ. բարձր... Ուզեցի ձեն տամ. իմացնեմ, վոր յես եմ, բայց հակառակի պես, պոեզը հանկարծ շվացրեց մոտիկ ու եկավ շըխշըխկալով: Մարդիկ իրար դիտով դիպան. բեռները, կապոցները հավաքում են, պատրաստ կենան, վոր պոեզը կանգնի թե չե՝ վազոնները մտնեն: Մի կողմից վազում են, մի կողմից կանչում են իրար, բիլեթ են դոռում: Իսկ նրանք՝ բռնավորները յերգում են ձեն-ձենի տված:

Ել եղտեղ, եղ զալմաղալի մեջ, իմ ձենը կը լսվե՞ր վոր...

Յերբ պոեզը կանգնեց, դրանց բոլորին շըջապատած տարան պարավոզի կողքի վազոնը, էն, վոր լոսամուտները, տեսած կըլեք, երկաթած են բանտի պես: Դրանց տարան, յես ել կապոցը ձեռիս, նրանց յետևից: Մարդիկ դժվժում են, վազոններն են մտնում, դուրս են գալի: Անցնել չի ըլում. Բոթում ին դես, բոթում են դեն՝ չեն թողնում մի դրանց հասնեմ: Վերջը աչքս զինվորների խշտիկների վրա, վոր նրանց չկորցնեմ, դնացի մի կերպ:

դնացի հաստ ենտեղ, վոր վերջին բռնավորին վազոն են նստեցնում, նրա յետևից ել զինվորները՝ հ հրացանները ձեռներին, հրացանների ծերին խշտիկներ:

Եղ վոր տեսա՝ սիրտս մի ուրիշ տեսակ եղավ:

«Վոնց թե, ասում եմ, ենպես պըտի տանեն, վոր վերջին անգամ իմ յերեխին չտեսնե՞մ: Չե՛, ինչ ել ըլի, ասում եմ, պետք և նրա հետ խոսեմ, թեկուզ, եղ խշտիկներից մինը սիրտս խրեն, թեկուզ, մինչև անգամ, պոեզի տակը քցեն»...

Մտածեցի եսպես ու վազոնի դեմը կանգնած՝ ձեն տվի.

— Վիկտոր, Վիկտոր ջան...

Լավ եր զինվորները չհասկացան ու՞մ եմ դոռում — ձեռ չտվին: Իսկ Վիկտորը, ի՛նչպես եղավ, չգիտեմ, ձենս լսեց, ու վազոնի լուսամուտից:

— Մայրիկ, ասում և, դո՛ւ ես: Մնա՛ս բարով:

— Յես եմ, Վիկտոր ջան. քեզ համար պաշար ու փոխնորդ եմ բերել:

Ասում եմ ու ձեռսի կապոցը բարձրացնում:

Խոսքի կեսը դեռ բերանումս, բանտի մարդկանցից մինը մտեցավ, թեվս բռնեց ու բոթում և.

— Բռնավորի հետ խոսել չի կարելի, ա-
սում ե.— —հեռացի՛ր, հեռացի՛ր...

Են կողմից մյուսները ու նրանց մեծը.

— Հեռացրո՛ւ, հեռացրո՛ւ, ասում են,—
չի կարելի:

— Ինչո՞ւ չի կարելի, ասում եմ:— Իմ
աղջկանը ո՞ւր եք տանում, անաստվածներ:
Իմ աղջիկը բայլչեիկ չի, իմ աղջիկը...

Ասում եմ, գոռում ու ելի առաջ եմ ուզում
գնալ:

Չեն թողնում:

Իսկ Վիկտորը վազոնից.

— Մայրիկ, ասում ե, հանդիստ կաց:
Եդ լրբերի հետ մի՛ խոսի: Յես բայլչեիկ եմ,
թո՛ղ ինչ ուզում են անե՛ն:

Ենտեղից մյուս աղեքը՝ Վիկտորի ընկեր-
ները.

— Մայրիկ, գնա՛ տուն, մայրիկ, հան-
գեստ կա՛ց...

Հեչա ե ասել՝ «հանդիստ կաց»: Միրոս
կրակ ե ընկել, նրանք — «հանդիստ կաց»: Գո-
ռում եմ ու ուզում եմ առաջ գնամ: Ժողո-
վուրդն ել հավաքվել—կիտավել ե ձենիս վրա:
Մարդիկ՝ գլուխները վազոններից հանել, մը-
տիկ են անում ու, ո՛վ գիտե, մտածում են՝
«ես ինչ զարաչի կնիկ ե»: Բայց ինձ համար
հե՛չ: Մահն աչքիս տակն եմ առել. ե՛լ մարդ,
մարդաթ չեմ հարցնում—գոռում եմ, վոր թող-
նեն...

Բայց ինչ արի — ել չկարացի առաջ դնամ:
Վրա յերեք գանգը ավին: Մարդիկ ելի իրաջ
զլիսով դիպան: Պոեղը շարժվեց: Մին ել Վիկ-
տորը ձեն տվեց.

— Մնա՛ս բարով, մայրիկ:

Ու հենց պոեղը շարժվեց, նրանք, Վիկ-
կտորն ու ընկերները, յերեքին ելի իրանց
յերգը:

Ել չկարացի համբերեմ. վազում եմ պոե-
ղի յետևից ու ձեն տալի.

— Վիկտոր, Վիկտոր...

Պոեղը գնում ե՛ յես վազում եմ, Պոեղը
գնում ե՛ յես վազում եմ...

Ել չիմացա ինչ պատահեց դրանից հետո:
Առավուրը դարձնեցի— վակզալումն եմ. բու-
ֆետ պահողի ոթախում: Չարժնեցի ու ինչ
տեսնեմ— վրես, գլուխս թաց: Բուֆետի աղ-
ջիկը, սալիտակ Փարտուկ հագին, մի ջրի ա-
ման ձեռին, կանգնել ե կողքիս ու ձեռը գլու-
խըս ե քսում:

— Վո՞նց ես հիմի, մտքբուր, հարցնում
ե, լա՞վ ես:

Նոր իմանամ, վոր պոեղի յետևից վազե-
լիս՝ ուշս գնում ե: Ծառայողները տեսնում
են, վերցնում են, բերում բուֆետ պահողի ո-
թախը, կանչում են վազալի բժշկին, ինձ
ուշքի յեն բերում, տեղ են տալիս՝ քնում եմ:

Ես բոլորը եդ աղջիկը պատմեց:

Քիչ հետո ինձ բերող տղեքը եկան ինձ տեսնելու: Կահարգով, բանով, յերկաթուղու շորեր հագած տղեք եյին: Երկու հոգի:

— Վո՞նց ես մայրիկ, ասում են:

Ու զարմանում են, վոր յես գնացող պոեզի յետևից վազել եմ:

— Բա կնիկն եղպես սիրտ կունենա՞, ասում են:— Պոեզի յետևից ես ընկել ու «Վիկտոր» ես կանչում: Վիկտորը քու ի՞նչն է, հարցնում են:

— Իմ աղջիկը:

— Մենք եղպես ել գիտեյինք, ասում են: Միայն մերը կարող է եղպես սիրտ ունենալ:

Հետո պարզվեց, վոր դրանք իմ Վիկտորին հանաչում են:

— Վիկտորը մեր ընկերն է, ասում են, մայրիկ: Դու մի վախի, հանգիստ կաց: Վերջը ամեն բան յով կըլի...

Սիրտ տվին, արևներն ապրի, եղ տղերքը, չայ բերին՝ քցովի, խմացրին, վերջն ել՝ Փայտոն նստացրին, թե՛ «գնա»... Եղտեղ, Փայտոն նստելու ժամանակ, դրանցից մինն ահանջիս ընկավ, թե՛

— Մայրիկ, յեթե բանի կարիք ունենաս, արի մեղ ասա, առանց քաշվելու: Դու մեր մերն ես, հեջ ամաչիլ մի: Վիկտորը մեր ընկերը, մեր քույրն է... Կը դաս, ասում ե, կը հարցնես ինձ: Իմ անունն ել, ասում ե, Պետրե ե...

Եղ խոսքերը սրտիս սին տվին:

«Փառք քեզ, աստված, ասում եմ, դեռ լավ մարդիկ կան աշխարի երեսին»:

Եղ ժամանակ տեսա, վոր պաշարի կապոցը չկա: Կորել եր: Հավը, ձուն, հացը—գլուխը քարը. Վիկտորիս շորերն ել հետն եր կորել...

Փայտոնով վոր ինձ տեսան հարևանները՝ կանգնել, զարմացած մտիկ են տալիս, թե ես լվացարար Աննեն ի՞նչ սուսի տեր ե, վոր Փայտոն ե նստել: Ես ել պետք ե ասեմ, վոր կյանքումս, մինչև եղ, երկու անգամ եյի Փայտոն նստել: Մի անգամ, յերբ Միխակի կնիկը—Լիզիկին հիվանդ եր—դրկեցին Փայտոն բերեմ—ե՛ղ ժամանակ: Եղ ել վո՞նց ելավ: Գնացի Փայտոն կանչեցի. Փայտոնչին ասում ե՝ «Դե նստի, գնա՛նք»: Մեկ ե՛ղ, մեկ ել աղջիկ ժամանակս եմ նստե՛լ...

Եղպես՝ հարևանները զարմացան ինձ Փայտոնի վրա տեսնելով, իսկ մեր տանտեր Միխակի կնիկը—Լիզիկին, բարկոնում կանգնած՝ նայեց ինձ, նայեց ու քթի տակ ծիծաղեց.

— Ենքան զարգացել ես, ասում ե, հիմի ել Փայտոնով ես ման դալի՞:

Ծաղր ե անում:

Ձեն չհանեցի: Բայց նրա ծաղրը սրտիս գիտավ դանակի պես: Իմ որին, ասում եմ, սրա ծաղրին: Ու բան չեմ խոսում:

— Քեզ հետ եմ, աղջի, Աննա, ասում ե, գեսը մտիկ արա՛:

Գլուխս չբարձրացրի: Սիրտ չունեմ:

Իսկ նա վերելից, նո՛րից.

— Դեսը մտիկ արա՛. բան եմ ասում:

— Ի՞նչ կա, հարցնում եմ:

Թե՛ արի, ասում ե, պոլերը լվա:

— Ե՛հ, ասում եմ, իմ սրտին, քու դարդին:

Պոլ լվանալու սիրտ չունեմ, ասում եմ:

— Խի՞, ի՞նչ ե պատահել քու սրտին:

— Ե՛հ, ասում եմ.— Վիկտորիա տարան Երևան:

Ի՞նչ ասի, վոր լավ ըլի:

— Շատ ել լավ արին, ասում ե, աչքն ել հանեցին ազգի դավաճանի: Դրա համար ել, ասում ե, դու տխրո՞ւմ ես: Արի՛, արի՛ պոլերը լվա...

Քիչ առաջ ծպղբեց—մի դանակ խրեց սիրտըս: Ես ել՝ մի նոր դանակ: Ենպես եղա վոր—տաք ու պսոզ քրտինք տվի. ենպես եղա վոր—ցավս մոռոպցա, կատաղեցի.

— Խի՞, ասում եմ.— յես մեր չե՞մ. յես սիրտ չունե՞մ, վոր իմ գավակի համար ցավի՞: Շունը վոր չուն ե, ասում եմ, նա ել ե դարդանում իր գավակի համար: Հիմի դու ինձ շանից ել վատ ես համարո՞ւմ... Չե՛, ասում եմ, յես պոլ լվանալու սիրտ չունեմ...

Ասի ու մտա տուն:

Նա մնաց հետեվիցս նայելով:

Ու եղ որվանից խռովեց ինձանից: Ել բանի չեը կանչում: Մի գաղթական կնիկ եր դը-

տել, նրան եր բանեցնում: Դա ել լվացք անել չգիտեր. շորերն ենպես եր մղում՝ պատռում եր, ենքան լեղակ եր գցում շորերին, վոնց վոր կապուտ ներկես:

5

Երեվան տանելուց հետո յերկու-յերեք շաբաթ անցավ՝ Վիկտորից նամակ չկար: Յես ել— անհանգիստ կնիկ— ինձ ուտում եմ. գիչերնեը չեմ կարում քնեմ: Ամեն որ նամակ բերողին հարցնում եմ. «Աննա Դանելյանց, նամակ չկա՞»: «Չե՛»: Ու խնդրվում եմ, վոր յեթե նամակ լինի ու յեթե տանը չըլեմ— լոււամուտի կոտորած տեղով գցի ներս: Չեյի ուղում իմ նամակը—բանը Լիզինիկի կամ նրա աղջկերանց ձեռն ընկներ: Խռով եյինք. նրանք ինձ հետ չեյին խոսում, յես՝ նրանց: Եսպես մի ամիս ել անցավ՝ նամակ չեկավ: Հաղար ու մի բան եմ մտածում—տեսնես ի՞նչ պատահեց, տարան երեխուս գլուխը կերան, ի՞նչ ելավ: Մարդ ել չկար սրտացավ, վոր սիրտս բանամ, հետը խոսեմ: Ում հետ ել խոսում եյի՝ իմ աղջկանն եր վստ դուրս բերում: Մենակ Պետրեն եր, վոր սիրտ եր տալիս ինձ. «Նամակ չլինելը, ասում եր, վոչինչ. յես հաստատ գիտեմ, վոր տեղ են հասել ու բոլորն ել լավ են»: Մի քանի անգամ գնացի նրա մոտ — միշտ եսպե՛ս խոսքեր: Ու ամեն անգամ ել

քանի՛ գնում եյի մտառ, կը հարցնեք:— Մայրիկ, յեթե կարիք ունես, մի քաջվի, ասա՛. յես քու վորդին, դու իմ մերը...

Յես ամաչում եյի. շատ ել կարիք ունեյի, բայց քաջվում եյի: Ինչքան չըլի՝ ոտար տղա յե, մտածում եմ.— յես նրանից վո՞նց փող վերցնեմ: Անցալ մի ամիս մի շաբաթ—նոր մի կտոր նամակ եկալ— «Մայրիկ, յես լավ եմ. բարևում եմ»: Հետո թե՛ «դոչալ կաց. իմ մասին մի՛ մտածի. վիկտոր Դանելյանց». Եղպես ել գրում ե՛ մի՛ մտածի... Ամբողջ որը ուշք ու միտքս իր վրա յե, իսկ նա՛՝ մի՛ մտածի... Դրանից հետո մի նամակ ել եկալ, ելի եղպես կարճ յես լավ եմ, դու հանգիստ կաց, իմ մասին մի մտածի... Եսպես, հինգ թե վեց ամիս եր, հոկտեմբերն արդեն անցել եր, նոյեմբերը յեկել, յես հանգիստ չեմ կարում նստեմ, ամեն տեղ կարծես ինձ հուշտ են անում, թե ես ինչ մեր ե, վոր աղջկա մասին չի մտածում: «Ես ել մի բան չի, ասում եմ ինձ ու ինձ,— մի աղջիկ ունենամ ես աշխարհում, են ել— բանտում ու հինգ—վեց ամիս երեսը չտեսնե՞մ: Ել ի՞նչ մեր եմ յես», մտածում եմ:

Մտածեցի, մտածեցի—մի որ ել վեր կացալ գնացի Պետրեյի մոտ: Եսպես—եսպես:

—Ուզում եմ գնամ Երևան, Պետրե ջան, ասում եմ,—վիկտորին տեսնեմ:

Պետրեն թե՛ վոչինչ չկա, զուր մի գնա:

Յես տեղեկություն ունեմ, վոր ընկեր վիկտորը լավ ե:

—Չե, ասում եմ, պետ քե Լենամ իմ աչքով տեսնեմ:

—Իսկ փող, ճամբի ծախս ունե՞ս, հարցնում ե:

—Չե, ասում եմ, մի կարպետ ունեմ. կը-ծախսեմ—կերթամ:

Պետրեն մտածեց:

—Դե վոր եղպես ե, ասում ե,—վոր հաստատ վորոչեւ ես գնալ, ե՛լ զուր ծախս մի անի. յես քեզ կուղարկեմ իմ մոր տեղը: Յես իրավունք ունեմ, ասում ե, վոր իմ մերը պոեզով ճրի գնա—գա:

—Ե՛հ, չնորհակալ եմ, ասում եմ, վորդի, աստված մուրազդ կատարի:

—Վոչինչ, մայրիկ ջան, դա իմ պարտքն ե. ընկեր վիկտորին յես շատ եմ պարտական: Բայց հիմի, ասում ե, դու ե՛ս (ասա—Երևան վոր գնաս՝ վո՞րտեղ կամ ո՞ւմ տանը պըտի իջնես:

—Յես եղ մասին չեյի մտածել: Դրուստ, ասում եմ, ես վոր ուզում եմ գնամ՝ վո՞րտեղ կամ ո՞ւմ տունը պըտի մնամ: Փողոցում հո՛չեմ կարա ապրեմ: Ամառ ել չի, թե ասես՝ մի պատի տակ կուչ կըզամ—կանցնի: Բայց, համարյա թե ձմեռ եր: Նոյեմբերը: Մեր սարերումն արդեն ձյուն եր յեկել:

—Յես ել չգիտեմ, ասում եմ, Պետրե ջան, ո՞ւմ տունը կարող եմ գնամ. վոչ ծանոթ ունեմ,

վոչ բարեկամ: Առաջին անգամն է, վոր Երևան եմ գնում: Առաջին անգամն է, վոր պոեզ եմ նստում:

Դրուստ վոր—մինչև եդ յես մեր քաղաքից դուրս չեյի եկած: Մի քանի անգամ վոտով գնացել էյի Սարիգեղ՝ ուխտի: Եդ քա՛ն: Մինչև եդ՝ պոեզ ել չեյի նստած: Պատահել եր—դաչնիկների գալու ժամանակ— ո՛ւմ լվցըը անում էլի—գնում էյի նրանց ճամբու գոում. ապրանքները, կապոցները չ՛ազոն էյի դնում. բայց տեղ գնամ— չե՛:

Ես՝ վոր Պետրեն լսեց—նորից մտածեց: — Վոչինչ, ասում է, անհոգ կաց: Յես քեզ մի ծանոթ կանդրխտորի՝ հետ կուզսրկեմ. նրան ել կասեմ, վոր տանի քեզ իմ լավ ընկեր Արաուչի տունը, վոր հենց փակղալի մոտ է: Նամակ ել կը տամ, ասում է, վոր քեզ լավ մտիկ անեն:

Արեն ապրի. եդպես ելսրավ:

Մինչև գնալս յես էյի պաշար պատրաստեցի—նորից հավ, ձու եփեցի, մի երկու կտոր լավ վոչխարի պանիր առա (Վիկտորը եդ պանիրը շատ եր սիրում), հավաքեցի Վիկտորի մնացած փոխնորդները, մի հին դերիա Փուֆայկեն, գուլպաները, ձմեռվա քաքաֆաններ. եդ բոլորը մի կապոց արի, հազն ու ուտելիք՝ մի: Ինքս ել մի քանի բան հագա իրար վրա, վոր ճամփին չմրսեմ, հետո շալս վեր կալա ու գնացի վազգալ:

Հա. գնալուց ուսաջ հլա մի բարձրացա Միխակի տուն: Մարդ ենք, մտածում եմ, մահկանացու, հեռու տեղ եմ գնում, ո՛վ է իմանում յետ դամ, յետ չգամ, գնամ մնա քարով ասեմ սրանց, նոր ճամփա ընկնեմ: Հա՛մ ել խնդրվեմ, վոր տանս վրա աչք ունենան: Շատ ել կողպեքով փակել եմ, բայց—ո՛վ է իմանում... Մին ասի՝ չգնամ, բայց մտածեցի վոր—լավ չի, հենց իրանք կըթչնամանան... Վերջապես իրանց տըն կեցնեմ, պետք է հայտնեմ ո՛ւր եմ գնում... Գնացի: Մուլթն եր. եսպես ուլթը կըլեր իրիկվա: Մարդ ու կնիկ, այսինքն Միխակն ու իրա կնիկը— Լիզիսկեն—տանն էյին: Լամփը վառվում եր սեղանի վրա, իրանք ել նստած՝ մուրարով չալ էյին խմում: Մարդը, իր սովորութքի պես, յախա—մախեն բաց (հացի, չալի ժամանակը Միխակը միշտ կրախմալը վերցնում եր— «Նեղում է»— ասում եր), կնիկն էլ՝ Քիչմիրի շալը ուսերին: Իսկ աղջկեքը՝ Անիչկեն ու Սոնիչկեն, մենյակի մի ծայրում հագնվում էյին. իրար չորեր էյին դգում: Ո՛հ, եդ աղջկեքը: Չեյի սիրում յես դրանց: Ալիբը քրտում էյին երեսները, պոռչները ներկում ու հայդա՝ փողո՛ց, բուլվա՛ր, վակղա՛լ: Ամբողջ որը զվիրն էյին տալիս... Եդ որն ել եդպես քավել էյին, վոր գնան... Ամբողջ որը դրանք տանը կուլում էյին իրար հետ, մոր հետ, բայց հենց փողոց էյին դուրս գալի թե չե՛ «Անիկա ջա՛ն, Սոնիչկա ջա՛ն»... Յես մի անգետ Կնիկ

եմ. ուրիշ բաներ չեմ հասկանում, բայց աղջկերանց, կնանոնց բանը շատ լավ եմ հասկանում...

Մտա թե չե՛ եղ Անիչկեն ու Սոնիչկեն իրար նայեցին ու ծիծաղեցին:

— Յեկա՛վ, ասում են:

Քանի ամիս եր, ինչպես Վասի, դրանց տունը չեյի գնում: Ես անգամ վոր մտա, կարծեցին ճարահատյալ եմ, մի բան խնդրելու եմ եկել: Նրանք ծիծաղեցին— յես տերը չեղա: Կապոցը դրի դրան մոտ, վոտներս հասնեցի, շալը թևիս, խալիչի վրով Վառաջ գնացի, մոտեցա սեղանին ու՝ «բարրիկուն ձեզ» ասի: Գլուխ տվի:

Կնիկը— Լիզինկեն երեսը շուռ տվեց, իսկ ինքը— Մելիսկը հոնքերը հավաքեց, ծանր ծանր մտիկ արավ ինձ ու, վոնց վոր, խոսքերը քալփաթինով քաշեա.

— Բարով: Ի՞նչ կա:

— Վոչինչ, խալիս, ասում եմ, յաղութին: Յես ետը գնում եմ Երևան, կը խնդրեյի վոր... Սոսքի կեսը դեռ բերանումս, կնիկը— Լիզինկեն յես դառավ աթոռը գոռացնելով:

— Ինչ կը խնդրեյիր, ասում ե, — փո՞ղ, ճանապարհի ծա՞խս: Նեղ տեղը վոր ընկնում ես, մեզ հիշո՞ւմ ես, հա՞... Դու մեզանից բան մի խնդրիլ... Ում գործն անում ես— գնա նրանից խնդրի: Եսքան ել վոր քեզ սպահում ենք, հերիք ե: Հիմի ել՝ եկել ես՝ «Երևան եմ գնում»: Վոնց չե ասում ե, կալասկա լծեմ,

պաշար կապեմ, վոր տանես քու լիրբ աղջկան...

Սոսում ե, խոսո՞ւմ. ել չի թողնում մի խոս քասեմ. կարկուտի պես վրա յե տալիս:— Հա՛յ դու չուղեցիր իմ բանը անել. հա՛յ լվացքս ընկավ դաղթականի ձեռը ու քու յերեսից փչացավ:

Նա խոսում ե— աղջկերքը ծիծաղում են, նա խոսում ե— աղջկերքը ծիծաղում են, ինչքան վոխ ուներ թափեց գլխիս.

— Երևան ես գնո՞ւմ: Արի՛, արի՛ դուգեմ— դարդարեմ քեզ, անաղուհաց քրդի շուն...

Մինչև եղ նա խոսում եր, յես լուում եյի: Ասում եմ հլա տեսնեք ի՞նչ ե ուղում սա: Գիտեմ սիրտը երվել ե. թող խոսի: Բայց վոր տարավ ու բերեց թե՛ «անաղուհաց քրդի շուն», — ել չհամբերեցի: Մի վոտս յես դրի, մյուսը առաջ, աչքերս խփեցի, բերասն բաց արի:

— Տո քրդի շուն ել ես, հայի շուն ել: Քու վո՛չ փողն ե ինձ հարկավոր, վոչ պաշարը: Յես ձեզանից, ասում եմ, փող ու պաշար ուղելու չեմ եկել. ձեր փողն ել ձեզ ըլի, ձեր պաշարն ել: Յես եկա, ասում եմ, վոչ բարով ձեզ մնաս բարով ասելու ու վոչ թե փող ուղելու...

Ասում եմ ու ել մարդ, Միխակ չեմ հարցնում: Ենպես եմ բարկացել, վոր գլխիս դափաղը ժաժ ե դալի:

Յես խոսում եմ—աղջկեքը ծիծաղում են,
յես խոսում եմ՝ աղջկեքը ծիծաղում են:

Շատ վոր ծիծաղեցին—յես դարձա՝ հիմի
եւ դրանց.

— Դուք ինչի՞ եք ծիծաղում, ասում եմ.—
Մինը պըտի ըլի ձեզ վրա ծիծաղի, թի՛ված
պառավներ, վոր քաղաքում մարդ չէք թողել
—ամեն որ վաղալ եք վազում՝ նոր մարդ
գտներ, ուսերը թռչեք...

— Դրանց վոր շարեցի՞ փուշները թո-
րին. ծիծաղները վերջացավ. ձենները կտրե-
ցին: Իսկ Միխակը կարմրեց, տաքացավ ու
հանկարծ ձեռը սեղանին խփեց ու կանգնեց.

— Լռի՛ր, ասում ե, — մի համարձակվիր
իմ տանն եղպես լեզու բանեցնել, թե չես ես
բոպեյին քեզ բռնել կը տամ:

— Ինչու՞ համար, հարցնում եմ:

— Քո եղ խոսքերի համար:

— Բա ինչու՞, ասում եմ, քու կնիկանը
բռնել չես տալի, յերբ նա ավելի՞ վատ խոս-
քեր ե ասում:

— Ձենդ կտրի, ասում ե:

Ենտեղից կնիկը, աղջկեքը՝

— Պապա, դուրս արա դրան, խեղա՛ր
ե: Աղջկանը բռնելու որից խելադարվել ե:

— Խելագարը դուք եք, ասում եմ, հո-
ղեմ ձեր գլուխը, անխիղճ անամոթներ:

Ասի, վոտներս հագա, կապոցը վերցրի
ու դու՛րս: Սիրտս թեթեւացավ կարծես: Մին-

չե անգամ ուրախ եմ, վոր եղ խոսքերն ասի:

Դրա համար եր, ասում եմ, խեղճ աղջկա
ասում, թե հարուստները խիղճ չունին. նրանք
լավ են, յերբ քեզանից ոգտվում են, յերբ ի-
րանց համար բան ես անում, յերբ խոնարհ ես:
Դրո՛ւստ վոր: Եղպես եւ եղավ: Ու լավ եր, վոր
եղպես եղավ: Աչքերս բացվեցին:

Դուրս եկա—տանս մի կողպեք եւ ավե-
լացրի ու գնացի վաղալ: Ենտեղ հասա վոր,
տեսնեմ Պետրեն պալտոն հագին, մի ֆանառ
ձեռին ինձ ե փնտոում հավաքված խալխի
մեջ: Ինձ վոր տեսավ.

— Ես խի՞ ուշացար, մայրիկ:

— Վոչինչ, բան պատահեց, ասում եմ:

Ու եւ ջասի թե ի՛նչ:

Գնացինք ուղիղ վազոն մտանք:

Պետրեն ծանոթացրեց ինձ կանգըլխտորի հետ:

— Սա իմ յերկրորդ մայրիկն ե, ասավ.—
պետք ե տանես Երեվան: Առաջին անգամ ե գը-
նում, ասում ե, — ենպես արա, վոր չտխրի:

Կանգըլխտորը սե պալտոյով, յերկար տղա
եր, շվին վզիցը կախած: Ծիծաղեց Պետրեյի
խոսքի վրա:

— Հանգիստ կսց, ասում ե, վոր պոյեզը
չտանի—յես ինքս կը շալակեմ: Եսքան մարդ
տանում եմ, բա մի մայրիկ չեմ կարող տա-
նե՞լ:

Պետրեն թե՛

գոննի տան մեջ: Կնիկը ոռու եր, երկու ել երե-
խա ուներ՝ շեկլիկ մազերով, չալ աչքերով:
Վոր իմացավ Պետրեն ե զրկել ինձ — լավ ըն-
դունեցին, պատվեցին, շնորհակալ եմ: Գիշե-
րը քնեցի, առավոտը վեր կացա, տեսնեմ, եղ-
ոռու կնիկը սամավար ե քցել ու մի ենպես սե-
ղան ե բաց արել, — վոր մարուր ձուն: Տնարար
կնիկ եր. քիչ ու միչ ել հայերեն գիտեր: Չարթ-
նեցի, ուղեցի վեր կենամ. — չի թողնում:

— Զե, ասում ե, բարուշկա, քնի. նիչավո-
հոգնած ես:

Յես, իհարկե, չքնեցի: Քնելու համար եմ
եկե՞լ: Վոտիս տակին կրակ ե վառվում. ասում
եմ՝ չուտ անեմ, գնամ Վիկտորիս տեսնեմ: Մին-
չև վեր կացա, հագնվեցի — Արտուշը յեկավ:
Քցովի չայ տվին, մխլով արին, մուրարա հա-
նեցին: Չայի վրա բոյոր հանգամանքը պատ-
մեցի Արտուշին ու վերջն ել՝

— Արտուշ ջան, ասում եմ, հիմի վո՞նց ա-
նենք. յես ուզում եմ գնամ Վիկտորիս տեսնեմ:

— Դա հեշտ ե, ասում ե: Կասենք հեռվից
ես եկել, կը խնդրենք՝ կթողնեն:

Չայից հետո վեր կացանք գնացինք: Կա-
պուր Արտուշը վերգրեց ու առաջ րնկավ. յես ել
չայս առա՝ նրա յետևից: Գնացինք հասանք
բանտ: Խնդրեցինք, վոր ուզում ենք բռնավոր
տեսնենք: Ասին՝ կարելի յե: Եղ որո, իմ բախ-
տեո, տեսնելու որն եր: Հարցրին ու՞մ եք ուզում
տեսնել: Ասի իմ աղջկան, Վիկտորիա Դանել-

յանցին: Բանտի գլխավո՞րն եր, ինչ—կանչեց
ծառայողներից մեկին, թե՛ Վիկտորիա Դա-
նելյանցին բերեք: Ինձ ել Արտուշի հետ տարան
մի ուրիշ սենյակ, վոր հետը խոսեմ: Քիչ հետո
հեռվի կարիգորից լսեցի թե ինչպես կանչեցին
«Վիկտորիա Դանելյանց»»: Վախի՞ց թե ինչից,
ել չգիտեմ, սիրտս ենպես ե թպրտում, վո՞նց
վոր բռնած ծիտ: Ինչ հայի պտի տեսնեմ Վիկ-
տորիս, մտածում եմ, տեսնես առո՞ղջ ե, հազին
չոր կա՞:

Եսպես մտածում եմ, մեկ ել տեսնեմ մի
աղջիկ՝ տղամարդու պինջակի հագած, եկա՞յ
յերկաթների են կողմը կանգնեց: Չճանաչեցի
ո՞վ ե. երեսին ռանգ չկար. վիզը բարակել,
տանձի կոթ եր դառել. միայն աչքերն ելին
երեսին պսպղում, մեկ ել կտրած մազերն ելին
ուսերից հետ: Յեկավ նայեց ինձ, յես՝ նրան:
Ինչպես յերեվում ե՝ նա յել ինձ չճանաչեց. չեր
սպասում, թե եկած կլինեմ Երեան: Նոր դա.

— Մայրի՞կ, ասում ե, դու՞ ես:

Սիրտս թուլացավ: Վեց ամիս եր ձենը չեյի
լսել:

— Է, ես եմ, Վիկտոր ջան. . .

Ասի, ու ել չկարացի ինձ պահեմ, — լաց
յեղք:

— Դե, լավ, ասում ե. — լաց լի՛ տու չես յե-
կել: Ասա մի տեսնեմ ինչո՞ւ յես յեկել, ի՞նչ
կա:

— Քեզ տեսնելու, Վիկտոր ջան:

—Ե՛հ, ասում ե, դրա համար ել ծախս ես արել, հասել եստե՞ղ:

Խոսեցինք եսպես—ենպես, ու յես հարցնում եմ.

—Բա յե՞րբ պըտի ազատվես, Վիկտոր ջան. յե՞րբ պտի գաս տուն:

—Շուտով, ասում ե, մայրիկ, շուտով բոլորս ել կսպասովե՛նք:

Ասում ե ու նայում զարաուլի կողմը, վոր կանգնած՝ լսում ե մեզ:

Յես ուրախացա.

— Վո՞նց, ասում եմ, ուրեմն գործը քննե՞լ են:

—Ո՞վ պըտի մեր գործը քննի, ասում ե:

— Մենք կազատվենք առանց քննիչի ել: Մեր բնկերները կգան շուտով, կազատեն:

Դա վոր եսպես սկսեց—ապրառւլն են կողմից, թե՛

—Եդ մասին չի կարելի, գործի մասին խոսեցեք, որիորդ:

Խոսեցինք մի քիչ ել, յես «մնաս բարով» արի՝ դուրս եկա, վոր եքսի որը ճամփա բնկենեմ: Իայց տուն հասա թե չե—խարսր եկավ, վոր թուրքերն Այեքսանդրապոլը գրավել են, ճամփեն փակվել է՛:

Ա՛յ քեզ խայտառակություն: Ի՞նչ անեմ Հիմի...
Ե՛լ ճար չկար: Պետք ե հնայի...
Ու մնացի Յերեան, Արտուշի տանը:

Մտածում եմ—սա ինչ վատ բան եղավ, եկա ես խեղճ մարդկանց տանը բեռ դառա: Իայց Արտուշը թե՛

—Վոչինչ, մայրիկ, մի մտածի. մեր մերն ես. քսչվիլ մի... Մի կտոր հաց կգտնենք... Կնիկն ել մի կողմից.

—Նիչեվո, բարուշկա, նիչեվո...

Եսպես անցավ մի քանի որ: Դարդ եմ անում, տեսնես կազատվի՞ Վիկտորը, կամ յե՞րբ կազատվի, իսկ—Արտուշը ինձ սիրտ եր տալիս, թե շա՛տ չի քաշի. շուտով, շուտով, շուտով:

Մի որ ել դա եկավ թե՛—մայրիկ, վեր կաց քնանք բանտ:

—Ի՞նչ կա. Արտուշ ջան:

—Մեր բնկերները ետոք բանտից դուրս են գալիս: Վիկտորն ել դրանց հետ:

—Վո՞նց թե, զարմանում եմ:

— Բա ասում ե, կառավարությունը փոխվեց: Իշխանությունը հիմի մեր ձեռին ե...

Նոր իմանամ, վոր ես Արտուշն ել բալչեիկ ե, Պետրեյի բնկերը:

Գնացինք: Են ինչ վոր յես տեսա—սլատմել չի ըլի: Ի՞նչ ուրխսություն եր: Հասանք ենտեղ, վոր մարդիկ հավաքվել—կիտվել են բանտի դրանը: Դրոշակներով, բանով: Ու մեկը դլասնց միջից մի քարի վրա բարձրացած ճառ ե ասում բանտից դուրս յեկածներին.

— Ընկերներ, դուք տանջվեցիք շատ, բայց...

Դա խոսում է, յես՝ աչքերս չորս արած Վիկտորին եմ ման գալիս:

Բայց եղբան մարդու մեջ Վիկտոր կը գրտնալի՞: Դես նայեցի, դեն նայեցի — չկա՛: — Մին ել — յերբ խոսողը վերջացրեց — նրա տեղը բարձրացավ Վիկտորը՝ ելի տղամարդու պիջակը հագին, կտրած մազերը բաց ուսերին կախ: Վեր կացավ ու՛

— Կատարվեց, ասում է. են ինչ վոր մենք սպասում էյինք...

Դա խոսում է — յես լաց եմ ըլում, դա խոսում է — յես լաց եմ ըլում: Ես անգամ ուրիշ տեսակ: Լաց եմ ըլում ուրախությունից...

Դա վոր խոսեց պրծավ — յես, ժողովրդի միջով, գորով մոտեցա դէպն ու թևը բռնեցի.

— Վիկտոր:

— Վա՛յ, մայրիկ, ասում է:

— Յես եմ, Վիկտոր ջան:

Բռնեցինք իրար, համբուրվեցինք, ու յես լաց եմ ըլում: Արտասուքս չի կտրվում:

Լաց եմ ըլում ուրախությունից...

Դրանից հետո ամիս ու կես մնացի Յերեմիան՝ Վիկտորի մոտ: Մնացի, քանի վոր ճամփեն փակ եր. թուրքերը նստած էյին Ալեքսան-

դրապոլում: Եղամիս ու կեսը ինձ համար շատ դժվար անցավ: Յես քաղաքին անձանոթ, բոլոր ժամանակ ել մտածում եմ՝ տեսնես տունս ի՞նչ յեղավ, ի՞նչ պատահեց: Թալանեցի՞ն, կտրեցիին: Մտածում եմ ու սիրտս չի հանդրատանում: Վիկտորի հետ ճաշարան էյի գնում, դալի տուն: Նա գնում եր գործի, ժողով — յես մնում էյի տանը ու մտածում էլի տանս մասին: Թալանեցի՞ն, կտրեցի՞ն: Ու սպասում եմ ճամբեն բացվի — գնամ: Մի որ ել — դա հունվարի մեջն եր — իմացանք մի պոեզ է գնում Թիֆլիս: Կամիսարի պոեզ է: Վիկտորը դես ընկավ, դեն ընկավ, սրան խնդրեց, նրան խնդրեց — պոեզումը տեղ տվին: Նստեցի եկա մեր քաղաքը: Զմեռվա են թունդ ժամանակն է: Հունվարը: Յուրտը թրի պես կտրում է: Վազոնում սառչում էյինք: Հասա մեր վակզալը — Պետրեն պատահեց:

— Բարո՛վ, մայրիկ, բարո՛վ:

— Բարին արևիդ, Պետրե ջան:

— Ի՞նչպես գնացիր. ընկեր Վիկտորն ի՞նչ պես է: Հարց ու փորձ ամեն բանից: Ասի՛ լավ գնացի, Վիկտորս ել շա՛տ բարով է անում: Դրուստ: Նա ասել եր, վոր բարև անեմ Պետրեյին և շնորհակցություն հայտնեմ իրա կողմից: Հետո տեսնեմ դրա դուշին մի կարմիր կըտոր:

— Դու ել բալչևի՞կ ես, Պետրե ջան:

Թե՛ հա՛. ինձ ընկեր Վկտորն ե բալչեվիկ
գրել:

Ա՛յ թե հա, մտածում եմ: Հիմի հասկացա,
թե ինչու՛ ե նա հարգում Վիկտորիս, ու նրա
հետ ել ինձ: Դա տեսավ տուն եմ գալիս, ձեռիս
ել բան կա—Փայտոն կանչեց ելի, նստացրեց:

Փայտոն նստած գալիս եմ տուն ու մտա-
ծում եմ, թե տեսնես ինչպե՞ս ե տունս—անվը-
նս՞ս ե, բան ե պատահե՞լ:—Եկա տուն: Հարե-
վաններս են անգամվա պես սկի չզարմացան
ինձ Փայտոնով տեսնելիս: Միխակի կնիկը—
Լիզինկեն եղ ժամանակ հայաթի դրանն եր:
Ինձ վոր տեսավ — ուրախացավ:

— Աղջի, Աննա՛: Վերջապես եկար, Նստում
ե:—Մենք ել մտածում ենք, թե ի՞նչ պատահեց
խեղճ կնկան. տեղ հասա՞վ, հիվանդացա՞վ:

Յես բան չխոսեցի:

Նա ելի.

— Աչքներս ջուր կտրեց: Վախենում եյինք
թե մի բան պատահած ըլի: Ու հրավիրում ե
իրա տուն չայի:

— Արի՛, ասում ե, արի՛, հողնած, մրսած
կլես. արի՛ չայ խմի, սամավարը դեռ տաք ե:

Հայաթը մտա, Միխակը պատահեց՝ բալ-
կոնում կանգնած:

— Աղջի, Աննա, դու՞ ես, հարցնում ե.—

Յես ել Նստում եմ՝ ես կնիկը ի՞նչ եղավ:

Ու սա ել մի կողմից ե հրավիրում քսյի:

— Արի՛, ասում ե, մրսած կլես: Արի՛:

Յես բան չեմ խոսում: Սուս ու փուս, կա-
պոցը ձեռիս գնում եմ դեպի պաղվալը—իմ ո-
թախը:

Իսկ նա՛

— Գեղ չեմ ասում, աղջի, արի՛ չայ խմի:
.. Շատ վոր ասին—մարդը ջուկ, կնիկը ջուկ,

— Շնորհակալ եմ,—ասի՛ ու մտա պաղվա-
լի բալիոնը: Մտա ի՞նչ տեսնեմ—իմ դրան վրա
ուրիշ կողպեք...

Վոնց վոր կացնով գլխիս տան: Ծնկներս
թուլացան, մնացի ստուած կաղնած. սառ ու
տաք քրտինք յեկավ վրես: Միրտս վոնց վոր
մղես: Ուրեմն տունս կարել են, մտածում եմ,
դրա համար սրանք ինձ վերև են կանչում, վոր
սիրտս առնեն:

— Ես ի՞նչ բան ե, ասում եմ, ես ու՞մ կող-
պեքն ե: Լիզինկեն թե.

— Մերն ե... Արի վերև, բալանիքը մեղ
մոտ ե:

— Ի՞նչ ե պատահել, ասում եմ, տունս
կտրե՞լ են, ի՞նչ ե:

— Թե՛ չե, արի վերև կը պատմեմ:

— Ել ի՞նչ գամ, ասում եմ,—բալանիքը
տվեք, տեսնեմ ի՞նչ ողբաթ ե եկել գլուխս:

— Վոչ մի ողբաթ ել չկա, ասում ե: Հան-
զիստ կաց. մենք եստեղ թշնամի չենք, վոր
թողնենք քո տունը թալանեն:

Քաղցր խոսում ե ու ելի հրավիրում չայ

խմելու:—Դու հլա արի չայ խմի, յես ամեն բան կը բացատրեմ:

Մարդը—Միխակն ել մի կողմից:

Շատ վոր ստիպեցին—գնացի: Մարդ ենք, մահկանացու, մտածում եմ, խոռով մնալն ել մի բան չի: Թող իրանց արածի համար իրանք ամանչեն: Ամիս ու կես առաջ շան լաիը թափեցին դիխիս, տանից հսմարյա դուրս արին—հիմի ի՞նչ է պատահել, մտածում եմ, վոր ես պես հրավիրում են, ուղում են պատվել: Քարը գողիցս վեր ածի—գնացի: Մտա դրնաց ոթախը թե չե — դարմանքից մնադի կանգնած: Տունը վոնց վոր կլպած. վոչ պոլին խալիչա կա, վոչ լուսամուտին վարագույր, վոչ սեղանին երես:

Բուֆետի չկաֆը դատարկ է, աթոռների մեծ մասը չկա, դիվանի խալչեն ու նաչխած բարձերը չկան: Դիվանի վրա մի կարպետ է հասարակ: Մի խոսքով՝ տունը կարծես, պլոկած—թսլանած: Իրանք ել հին շորեր են հագել—կանգնել:

Սղջկերքը յեկան ներսի ոթախից:

—Բարով, Աննա, ասում են,—Յերեանը հավանեցի՞ր:

—Կա ելի, քաղաք է իր համար:

Տեսնեմ՝ դրանք ել են հին հագնված: Ել առաջվանը չեն: Շախները կոտրած է: Չե՛, մտածում եմ, ետեղ մի բան կա: Կա՛մ մի ցավ

է պատահել սրանց, կամ բալչեվիկները սրանց ապրանքը տարել են:

—Ես ի՞նչ բանե, ասում եմ, ես ձեր ապրանքը ո՞ւր ե:

Լիզինկե թե՛

—Պաղվալումն է:

Յես մատս կծեցի: Բալչեվիկներից վախեցել են, մտածում եմ: Չե վոր խոսում են, թե բալչեվիկները թալանում են: Եդ վոր մտածեցի, սիրտս ելի ահ ընկավ:

—Բա իմ կողպեքը խի՞ է վաղված:

Լիզինկեն թե՛

—Եդ վոչինչ... մենք ենք փոխել, վոր պինդ ըլի: Տեր աստված... Բան չեմ հասկանում: Մարդիկ եսքան սրտացավ են յեղել, իսկ յես կասկածում եյի:

Սամավարը տաք եր. մի թաս չայ խմեցի իլաթրներից չըլելու համար, ու ասում եմ.

—Դե, բանալիքը տվեք, գնամ տեսնեմ տունս ինչ հալի յե. մուկը հիմի շորերս կտրել է:

Լիզինկեն թե՛

—Վախիլ մի. մենք ենտեղ կատու յենք քցել:

Տե՛ր աստված.

—Կատու եք քցե՞լ, ասում եմ:—Բա վոր ամաններս ջարդի՞. բաց դրված են:

—Չի ջարդի, ասում է, մենք տեղավորել ենք:

— Վորտե՞ղ:

— Շկսֆում:

— Ի՞նչ չկաֆ, ասում եմ, — յես չկաֆ
չունեմ:

— Մեր չկաֆում, ասում ե:

Յես զարմացա, ու նորից մաստս կծեցի:

— Ձեր չկաֆը իմ ոթախում ինչ գործ
ունի:

Միխակը թե՛

— Մենք ենք դրել:

Եդ ժամանակ նայեցի՝ տեսնեմ դրանց
չկաֆի մինն ել չկա ոթախում: Բայց թե ինչու՞
են իմ տունը դրել — չհասկացա:

— Բայց ինչո՞ւ համար եք դրել, ասում եմ:

Լիդինկեն թե՛

— Վոչինչ. կարող եր պատահել, ասում ե,
ուրիշները տանեյին — բանացնեյին. ասինք՝
ավելի լավ ե մեր Աննան, մեր խեղճը բանեցնի...

Ենտեղից աղջիկները՝

— Շկաֆի հետ ուրիշ բաներ ել կան,
Աննա, ասում ե, դու կբանեցնես:

Իսկ հերը — Միխակն իրա կողմից.

— Իհարկե, ասում ե, ավելի լավ ե մեր
Աննան բանեցնի:

Յես, չմածի պես, մնացել եմ կանգնած:

— Բայց ինչո՞ւ համար եք դրել, ասում եմ:

Հլա մի բալանիքը տվեք, դնամ տեսնեմ ի՞նչ եք
արել:

— Գնանք, ասում ե Լիդինկեն, — կողպեքը
սեկրետնի յե, դու չես կարող բաց անել:

Գնացինք: Դա դուռը բաց արավ — ի՞նչ
տեսնեմ: — Իմ տունն ե, բայց իմ տան նման չի.
Իրենց բուֆետի չկաֆը դրել են աջ պատի
մոտ, մեջը լցրել իրենց ամաններով: Իրանց
խալիչաներից մինը՝ ծալած քցել են իմ
տախտին, մյուսը յերկար փռել են սյուլին.
կատուն ել — իրենց սիպտակ կատուն — սուչը
ժած տալով, մոմռալով եդ խալիչի վրովը դը-
նում ե, գալիս... Հետո՝ պատերի տակին ա-
թոռներ են շարել. մի կյոր սեղան՝ իրա յերե-
սով, դրելեն են ոթախի մեջտեղը, իսկ իմ հա-
ցի սեղանի վրա դարսել են իրենց բարդ վարա-
զույրները... Տունս ենպես են արել — չեմ ճա-
նաչում... հա. պատերին ել մի քանի պատկերք
են կախել վոսկեվարազ ռամկեֆի մեջ... Մի
խոսքով՝ տունս շինել են թավաղի տուն: Միս-
տակ սամավարն ել մի կողմ են բազմացրել. մի
մեծ սունդուկ ել դրել են փեչի կողքին: Ուղե-
ցի բաց անեմ — փակ եր:

— Սա ի՞նչ բան ե, ասում եմ, — ե՛ս սնդու-
կը.

— Եդ ել մեր շորերն ե, ասում ե Լիդինկեն:
— Սրանք կբանացնես, Աննա ջան, սա ել կմնա
եստեղ: Քու աղջիկը բալչեիկ ե. իմանան
բալչեիկի մեր ես, քեդ բան չեն ասի...

Յես, իհարկե, ամեն ինչ հասկացա:

— Ենորհակալ եմ, ասում եմ, ձեր պատվից.

իմ ունեցածն ինձ հերիք ե: Ձեր ապրանքն,
ասում եմ, վոնց բերել էք, ենպես ել տարեք:

Դրանք՝ մարդը—Մեխակը ու Լիզինկեն
կանգնել են թե՛

— Թող մի քիչ մնա, Աննա ջան:

— Դու բանացրու...

Իսկ յես — չե՛:

— Ինձ հարկավոր չի, ասում եմ: Տարե՛ք.
չեմ ուզում իմ հալալին հարամ խառնվի:

Դրանք ելի խնդրեցին. յես՝ չե՛ վոր չե՛...
Ու սկսեցի դրանց ապրանքը մեկ-մեկ դուրս
տանել:

Եղ վոր տեսան, իրանք—հեր, մեր, աղջկերք
— յեկան իրանց ապրանքը տարան: Ուրիշ
ժամանակ վոչ մեկն ել մի բանի ձեռք չեյին տա:
Հիմի տեսնեյի՛ր—չորս ճանկանի եյին դառել.
Կնիկը մարդուց եր ժրացել, մարդը՝ կնկանից,
աղջկերքը—յերկուսից ել. կրում են ու նեղացած
փնփնթում. «Մեր ապրանքը քեզ չեր ուտի»,
«ինչդ պիտի վնասվեր»... Եսպե՛ս—ենպե՛ս:
Իսկ յես — բան չեմ խոսում:

Կրեցին—նոր իմ տունը մաքրեցի՛ նստեցի:
...Մնացի մի յերկու ամիս—Վիկտորս գրեց
թե՛ արի Երևան: Ունեցած—չունեցածս հավա-
քեցի, մի քանի բան ծախեցի, յեկա աղջկաս
մոտ:

Հիմի, ես յերկու տարի յե Երևան եմ:
Աղջիկս աշխատում է՝ ինձ պահում: Ազատվել
եմ սրա—նրա լվացքից: Գործս ե՛ն ե հիմա, վոր

կերակուր եմ եփում ու տունը պահում: Վիկտորն
առաջվա պես գնում ե ելի ժողովներ, մեկ-մեկ
ել գեղերը, վոր կնանոց ժողովներ անի, նրանց
գրի սեն ու սիպտակը սովորեցնի: Ապրում եմ
ականջս դինջ—ե՛լ վոչ Լիզինկի ձեռն եմ լսում,
վոչ մարդու, թե արի վոտնամանները սրբի,
պոլիքը մաքրի: Աստված յեթե Յերվանդիս
խլեց, Վիկտորիս գ.նե ենքա՛ն խելք ավեց, վոր
հողեց—հողի չկորչեմ...
Եսպես եղավ բանը...

1923 թ.





«Ազգային գրադարան



NL0332883

ԿԻՆՔ 55 Կ
ՆՁՄԸ 15 Կ

30037



ՍՏ. ԶՕՐՅԱՆ
ԴյՎՄՄՈՒՄ ԻԶ ԲԻԲԼԻՈՏԵԿԻ
ԴՆՅ. ՍՍՐ ԱՐՄԵՆԻԻ, ԵՐԻՎԱՆ, 1934